յամենայն ուրեք . և որք խնդրեցին կորուսանել ըզ-  
կեանս իմ : զարհուրեսցին . զի ոչ ուրեք զտանեն :  
Բայց ես զտից զհոսա , երբ ակն ոչ ունիցին , —  
իմացարուք բնակիչք Արմաւրայ . մայ տիմ , որ  
խորիցէ զինէն չար : Մահ և կեանք նորա կայցին  
՚ի բռան իմում , և դատեցայց զհոսա ըստ կամաց  
իմոց : —

Ա Բ Ե Դ Է Ն :

"Հարիւր կշիռ արծաթոյ" աղաղակեաց  
 Երուանդ , "որում զտանիցէ ինձ զհը-  
 րէն Աբեղէն , և հաղար կշիռ նիւա ,  
 որ մատնիցէ ատենի զժանան : " Ի  
 նանիր վաստակեցան գէտք արքունի և  
 լրտեսք : Ի նանիր աշխատեցան սնա-  
 պարծքն Արմաւրայ , և քաղցեալքն  
 և փողապաշտք , կրկտել զայր և զան-  
 ձաւ յամննայն ուրեք՝ ՚ի զիւտ զըլ-  
 խադրամոյ այսմիկ . Աբեղէն ոչ ուրեք  
 էր տեսանելի : • Բանզի զբաղում ամս  
 աշակերտելով ախտարացն Արսիլական ,  
 և ՚ի վրանս վհկաց անցուցանելով նորա  
 զմասն կենաց իւրոց , (որպէս յայլուր  
 լիազոյնս պասմեսցուք ,) ստացաւ զայն  
 արուեստ կերպարանափոխութեան , ո-  
 րով մերթ երեկը հսկայ վեթխարի ,  
 և մերթ հվեշտակ ՚ի մարմնի . մերթ ե-  
 րիտասարդ կորովի , և մերթ ծնկեայ  
 ծերունի . մերթ ազատ ոստանի . և մերթ  
 մշակ ՚ի զաշտի , մերթ պառաւ պարկեշ-  
 տասուն , և մերթ քուրմօրբակրօն : Ա-  
 մենայն ոք թուէր տեսանել զնա՝ յայս  
 կամ յայն նիշ ուրեք , այլ ոչ ոք զի-  
 տեր թէ ուր ուրեք :

Գ Լ Ո Ւ Խ Դ .

• Մ Ա Ն Ո Ւ Հ Ա Կ :

Ա յ ս ա ց ա ք ՚ ի վ ե ր ա ն ս կ ր , թ է ո ր ս լ է ս ս է ր՝  
ա ս տ ի զ ա յ կ ա ն դ ու խ տ Հ ա յ ո ց Ա յ ե -  
ծ ա ց , և ա ն ս տ ի զ Օ ու ր ա ն զ ե կ ն Ա յ ո ւ ա -  
ն ի ց խ ո ց ո ւ ե ա լ ն ե տ ի ւ ք ց ա ն կ ո ւ թ ե ա ն ՝  
և վ շ տ ո ց ո ւ ց ա ն է ր : Յ ա ւ ո ւ ր մ ի ո ւ մ չ ո -  
ք ա ւ ( Օ ր ի ո ր դ ն ա ն ս լ ի թ ա ր ) ՚ ի ը ո ւ ր ա ս տ ա ն ՝  
ա ր ք ո ւ ն ի , ու ր ա ն օ ր մ ի ա յ ն մ տ ե ր ի մ ք ՚ ի  
ս ի ր ե լ ե ա ց մ տ ա ն է ի ն , և զ ո վ ա դ ի ն ս ա ն -  
ց ո ւ ց ա ն է ի ն զ ջ ե ր մ ո ւ թ ի ւ ն ա մ ա ռ ա ն Ա -  
ր ա ր ա ս տ ե ա ն ն ը ա ր ե ր ե ր գ ա շ տ ի ն : Հ ա յ -  
կ ա ն դ ո ւ խ տ ս ո ւ զ ե ա լ ՚ ի խ ո ր ս ի ւ ր ո ց խ ո ր -  
հ ր դ ո ց շ ո ւ ա ս ե ա լ շ ր ջ է ր ՚ ի թ ա ւ ո ւ ս վ ա ր -  
դ է ն ե ա ց , ե ր բ ե մ ն յ ո ւ ս ա հ ա ս տ ե ա լ ի լ է ր  
զ ա ն ս մ ե ղ տ ե ր ե ս ՚ ի մ ա ց ա ռ ա ց , և ս փ ո ւ է ր  
զ ձ ա ն ս պ ա ր հ ա յ ն : Ե ր բ ե մ ն ա ն հ ա մ բ ե ր ու -  
թ ե ա մ բ ը ա ճ ա պ ա ր է ր ՚ ի վ ա զ ի ւ ր , և  
յ ա ն կ ա ր ծ զ կ ա յ ա ռ ն ո յ ր , և պ շ ն ո յ ր դ է պ  
՚ ի կ ա ն ք ա ր հ ա ս տ ա ս ո ւ թ ե ա ն ե ր կ ն ի ց : Ե ր -  
բ ե մ ն հ ե ա յ ր , և ե ր բ ե մ ն յ ո գ ւ ո ց հ ա ն է ր  
“ ո հ ո ր ք ա ն զ ե զ ե ց ի կ է ն ա : ” Ե ւ խ ա ն -  
դ ա կ ա թ ա չ օ ք հ ա յ է ՞ ը ն ա յ է ՞ ը և զ մ ա յ լ է ր  
լ ն դ ա ն բ ա ւ ո ւ թ ի ւ ն գ ա ս ա ր կ ո ւ թ ե ա ն ,  
ո ր պ է ս թ է ա ն ծ ա ն օ թ ի մ ն թ ա ք ո ւ ց ե ա լ

իցէ անդ անօր աներեոյթ յօտարաց .  
սակայն արդարէ Շողին , կրկնէր . և  
դարձեալ վերստին յուշ իւր՝ զայրա-  
նայր ՚ի միտո իւր , որպէս թէ ասել  
կամելով , թէ սղալ իցէ Շողին , և  
նենգաւոր խորհրդական :

Այս Շողին էր զայեակ և ստնդու-  
չայկանդիսոյ , որ վերջին գոլով ՚ի զա-  
ւակաց Հայկակայ Արքայի Հայոց՝ որ-  
բացեալ ՚ի մատաղ տիսն ընդ պաշտպա-  
նութեամբ Խզքօր իւրոյ ՚ի Շողինայ  
առնոյր սնունդ , որ ոչ միայն զգայե-  
կին լցուցանէր զպաշտօն , այլև սիրել-  
ոյ և մօր : Ուստի այնինչ ՚ի խորին  
մռածութեան իւրում Հայկանդուխո-  
շինէր զամնւրս ընդ օդ , և վերստին փը-  
լուղանէր զնոսա . յառաջ խաղայ Շո-  
ղին , և կոյսն յեղակարծուստ թափ  
առեալ , ասէր , Ա՞հ , այդ գու իցես  
մայր , — և յինչ եկիլ աստանելու  
Պատասխանեաց Շողին , գու զիս ըս-  
տէպ անուանես քոյ պահապան հրեշ-  
տակ , և պահապան հրեշտակին պարտէ  
հուպ կալ կարօտին խնամոց իւրոց :  
Հայութ . Խորհէի Շողին , ՚ի վերայ

զօրաւոր վաստից առարկութեան քոյ ,  
 ոչ ուրանամ՝ զջմարտութիւն ասացե-  
 լոցըն առ ՚ի քէն , բայց և այնպէս —  
 շառէ . Բայց և այնպէս , թէպէտե խո-  
 հեմութիւն քոյ համաձայն ինձ , այլ  
 սիրտ քո զընդգէմն խորհի : Հայութ .  
 Յիրաւի որ — շառէ . Առ այդ ոչ մե-  
 զադիր լինիմ քեզ , որդեակ . զի որպէս  
 երթեմն անպատճուակ ասացի քեզ , թէ  
 ես համահասակ քո լեալ էի , և տե-  
 սեալ զ Օ ուրան , յանկարելեաց սակի  
 համարէի զայլ ինչ խորհել զնմանէ՝  
 քան զոր դուդ այժմիկ : Ոչ ուրանամ  
 եթէ պատանին օտարական՝ անմահիցն  
 համանման ոք իցէ , և անփորձառոյ  
 սրտից՝ մերձաւոր վտանգաւոր : Տեսիլ  
 երեսաց նորա ամեննեին սխրալի , բարք  
 նորա՝ զուարթունք , սիրունք , և հա-  
 ճունք , թէպէտե եկ նորամուտ յԱր-  
 և իր , այլ մեծ է արդեամք և բա-  
 նիւք միանգամայն : Ասկայն և այն-  
 պէս աւազ . զի ՚ի վերայ այսր ամենայ-  
 նի , ոչ ինչ է նա՝ յաւետ քան զադքատ  
 ազնուական : Աւտի և յանկարելեաց  
 սակի է , թէ մեծափառթալ և քաջազօր

եղբայր քոյ Երուանդ՝ կալաւ զաջոյ  
 զքեռ իւրոյ տացէ առն ոյնաշխառոյ, որ  
 մուրացիկ մուտ ՚ի քաղաք մեր այս և ԱՅ  
 ՞չ ընաւ որդեակ, սիրահար յանդու  
 գըն առ ամենայն վտանկ՝ չէ փեսայ վայ-  
 ելու Օրիորդին Հայոց Վեծաց Հո-  
 յառ. ՞Ի՞ս, ով խօսեցաւ զփեսայէ, որ  
 ինչ յիսն անցին խորհուրդք զ Օ ու-  
 րանայ, ՞չ ինչ են՝ քան զբարեկամու-  
 թիւն և սէր : Շռն. Վհ դուստր իմ,  
 գնուստր իմ, կամակար խարես զքեզ :  
 Բայց անկեզծ հաւատն ինձ, զի օրի-  
 որդին որ սիրիցէ, անտարակոյս և շաղ-  
 կապէ զփափագ մշտնջենաւոր միութեան  
 ընդ մշտնջենաւոր սիրոյն : Արդ այս փա-  
 փակ է, զոր ՞չ կարես տաճել ՚իսրտի  
 առ Օ ուրան օտարական, առանց բա-  
 նի վրդովութեան եղբօր քում : որ բա-  
 րեհամբոյր որպէս և էն՝ տակաւին հը-  
 նազանդիլ պիտի օրինաց քաղաք ան-  
 լում: և ծիսի Ազգիս : Հոյնառ : Օ այդ  
 ամենայն քաջ զիսեմ, բայց ՞չ կարի-  
 ցեմ արդեօք հասկացուցանել քեզ, թէ  
 իմ ընդ Օ ուրանայ չէ սէր, և ՞չ իսկ  
 կամք սիրելոյ : Արկին ասեմ: զոր ինչ

ես ՚իորհիմ զնամանէ՝ ոչ այլ ինչ է, եթէ  
 ոչ անկեղծ բարեկամութիւն և զերմե-  
 ռանդ բաղձանք իմն առ բարինորաւ Եւ  
 արժանի խել է ։ Օ ուրան միշտ այսպի-  
 սի խորհրդոց ։ արժանի է ասացի ։ ով  
 և որոց արգեօք ոչ ։ — Շունքն . Այս ոյ .  
 բարեկամութիւն իրաւ ։ Ո՞հ Հայկան-  
 դուխու , Հայկանդուխու , ոչ զիտես  
 թէ որպէս միշտ փոփոխիցեն պատրիչքս  
 այսոքիկ ( բարեկամութիւն և սէր , )  
 զդիմակս իւրեանց յորսաւ զսիրտ ան-  
 փորձառեյ կուսանաց ։ Ոչ զիտես որ-  
 քան հեշտ ՚ի ներքս մտանէ սէր զանձամբ  
 արկեաւ զդիմակ բարեկամութեան ։ ըդ-  
 մուաւ ած թէ որքան ինչ պարտ իցես  
 Եղբօր քում , զմուաւ ած թէ որքան  
 տատամութիւն պատճառիցես հոգւոյ  
 նորա , և զոհ արտ երախտեաց նորա  
 զորինչ միանզամ խորհուրդք իցեն այ-  
 լ գոյն կրակ վառեն ՚ի սրտի քում , որ ոչ  
 հեշտեաւ շեջանի : Հայկանդուխու . Արդար են  
 բանք քոյ , հակամիտութիւն սրտիս առ  
 ։ Օ ուրան պատահական իմն է , զոր գիւ-  
 րաւ կարացից յանձնէ ՚ի բաց փարա-

տել : Աչ . ոչ . սիրահար Օ ուրանաց  
 ես ոչ եմ , այլ անդրադարձն՝ մինչ լուսոյ  
 թէ բարեկամութիւն իմ ընդ նմա ան-  
 հանդիստ առնելր զԱրքայ : Շոշն . Ար-  
 դարեւ այսքան ուժգին ազգիցեն քեզ  
 պարտիք երախտազիտութեանքու : Հոյ-  
 նաւ . Ազգեն Շողին , զորոյ զփորձ առ-  
 ցես այսուհետեւ : — Ատելի՛ Օ ուրան .  
 որ պատճառեաց ինձ այսչափ նեղութիւն  
 սրտի : Երանելի թէ չէր խակ նորա բը-  
 նու եկեալ յԱրմաւիր , և հաւատա ,  
 զի ոչ խակ և համիմ ընդ նա : Շոշն .  
 Խնչ , ոչ համիս դու լնդ Օ ուրան :  
 Հայկանդուխտ աստանօր ակն կորեալ  
 ի զետին հնչեաց , ոչ , ոչ բնաւ եր-  
 բէք — ոչ խակ և չար ցանկամ նմա .  
 առ ինչ միսասի ատիցեմես զ Օ ուրան  
 Թաղ մնացէ այս բան ի մլջի մերում  
 մինչեւ դարձայց վերստին , զի անդ-  
 րուար պատրաստէ , և ես հանդեպձեալ  
 եմ գնալ յապարանս արքունի զգոր-  
 ծոյ երեելոյ : Օ այս ասացեալ չոքաւ  
 Շողին : Խակ Հայկանդուխտ մնաց տը-  
 խուր և անհաստատ : Ի բուրաստանի  
 այնմիկ էր ազքիւր ջուրց ականակիտ ,

շուրջ զորով շրջապատեր սեղ դալարի  
 և բաղեղմնց պատառեալ զմացառօք  
 յակնթենեաց և մարեմանց յօրինէին  
 զհովանոց զովագին ՚ի վերուստնորուն:  
 Անդը նազէր Հայկանդիստ դաղդնջուն  
 քայլիւք, և իրրե մօտ հասանէր աղ-  
 բերն, յանկարծ ընդ կրունկն դառնայր  
 շեկնեալ յերանդ ամօթոյ: Քանզի անդ  
 էր Օռուան, մատեան մազալաթեայ  
 ՚ի ձեռին իւրում. քնին դործոց քաջա-  
 ղանց: Խըրե լուսու զձայն զգնալոյ նո-  
 րա՝ սթափեցաւ, և յարուցեալ կալաւ  
 զաֆոյ շքնազին, և տարեալ նստոյց  
 հուպ առ շրման ազքեր այնորիկ: Ան-  
 հութիւն անձին, և ազնուութիւն ծը-  
 նլնպեան Հայկանդիստոյ ոչ ներէր նմա-  
 գեզջկօրէն մերժել յինքենէ զեկն Աղ-  
 ուանից, տակաւին ձեռն ՚ի ձեռին կայլ  
 Օռուանայ, — Բայ կորզէր ՚ի բաց  
 ընդէլի այնինչ նա պահելով ՚ի ձեռին  
 երջանկանայր, և սա ոչ ինչ վնասէր:  
 Ո՞ինչե՞ի վերջոյ միայն զկապ լսութեան  
 հատանելոյ ազագաւ՝ առարկեաց Օռ-  
 րան այսպէս: Բարի է քեզ Պաժիոյ.  
 Նշել զոդ զովագին և պարզ քանի գե-

զեցիկ է երեկոյս : Հայունար . Ի՞այդ ընդ-  
 հատի զընթելցուածքո , սեսիւհ : Զար .  
 Աչ բնաւ , ասաց Օռլան , և ամի-  
 նայն առարկայ խօսից նոցա վերջացաւ ,  
 երկոքին ևս խոնարհեցոցին զաշ իւ-  
 րեանց ՚ի գետին , և որքան ըղձային  
 գտանել առարկայ միւսանգամ խօսե-  
 լոյ , այնքան և կարկամեալ մնային :  
 Աէր շողայր ՚ի խորհուրդնոցա : Մին-  
 չե անազան ուրեմն զոչեաց Հայկան-  
 գուխտ , ինչ սիրուն ծաղիկ , և խո-  
 նարհեցաւ քաղել անտի զմանուշակ :  
 “ Արդարե սիրուն ծաղիկ , ” պատաս-  
 խանեացնմա Օռլան , և յինքն դարձ  
 վերստին՝ ամաչեցաւ ընդ այսպիսի ա-  
 նալի զըոյց : Հայունար . Ըի՞ք որ զանցա-  
 նիցէ զծիրանեօքս , կամի՞ր և կապոյտ  
 չքնաղ զանգեալ ՚ի միասին , և որ պատ-  
 կերահան կարիցէ յառաջ բերել զայս  
 օրինակ միութիւն : Զար . Կար/Շիր ու  
 կապոյտ Մին՝ օրինակ երջանկրւթեան ,  
 և միւս՝ սիրոյ : Ա այ ինձ Հայկանգուխտ  
 որքան նախանձելի ոչ իցէ նա , որում  
 մաստուք քո մաստուցեն զայդ ծաղիկ :  
 Երջանկութիւն և սէր առաւել սեր-

տութեամբ միանան ընդ միմեանց : Քան  
 կարմիր ու կապոյտ երփունքն ՚ի մա-  
 նուշվկիդ : Օ ուրան . առաւել յարգ  
 դնես ծաղկիս , քան զոր արժէր ՚ի բնէ ,  
 ասաց Հայկանդուխտ : Երանելթէ գի-  
 տէի , ումարդեօք մատուցանիցէ Հայ-  
 կանդուխտ՝ զմեկնութիւն . մանուշակիդ  
 ծիրանւոյ , ասաց Օ ուրան . Յէպէտե  
 ՚ի վեր իցէ արդեանց իմաց հարցանել  
 ցքեղ . չգիտեմ զի՞ն՝ չպատահեցաւ ինձ  
 այսօր , որով այսպէս սղալիմ . ներեա  
 ինձ դժիոյ , ոչ ևս յանդդնեցայց ՚ի  
 խնդիր այրպիաի ընդ քեղ : Օ այս ա-  
 սացեալ լուռ եկաց . լուռ եկաց և Հայ-  
 կանդուխտ . չէր անդ որ շարժէր , բաց  
 ՚ի սրտից սիրահարաց : Ա ասնզի թէ-  
 պէտե կարկամեցան լեզուք նոցա ՚ի կի-  
 տին , սակայն զօրութեամբ իմանալի  
 է . զի մին կամէր ասել թէ ինձ տուր  
 զգաղինք , և միւսն՝ թէ քեղ պահեմ  
 զայս ծազիկ : Երթ մին հեչէր՝ Հայ-  
 կանդուխտ , և մերթ միւսն հծծէր՝  
 Օ ուրան : Եինչե ՚ի վերջոյ համար-  
 ձակեցաւ Ազուանն պարզապէս ասել .  
 տուր ինձ զայդ մանուշտկ , ով տուր

ինձ, երես անկեալ տղաչեմ: Առյօն  
 տակաւին պիրկ պահէր զծաղիկ իւր,  
 և Օ ուրան վերստին գոչէր, ինեղ-  
 բեան յինէն զոր կոմմա, եթէ զահ ար-  
 քունի զնեսցէ ինձ զոյդ, կամ տաց,  
 կամ մեռայց . առւր տղաչեմ զոյդ ծա-  
 ղիկ, Խրիստն անկաւ յոդի կուսին,  
 միանգամ հայեցաւ յաղերսարկուն, և  
 վերստին ոչ ժուժէր: Եխ' դու հան-  
 գիստ մասց իմոց, երջանկութիւն կե-  
 նաց իմոց, դու լոյս աչաց իմոց և  
 փառք, թող խմ լիցի այդ ծաղիկ, և  
 ահա հրաժարեցայց յամենայն պատուա-  
 կանաց աշխարհի՝ աղաղակեաց Օ ու-  
 րան հոգուվ զօրութեան իւրոյ: Օ ա-  
 ղիկն դողդոջէր ՚ի ծիւնափայլ ձեռին  
 դժխոյի Հայոց, թուլացեալ մասանց  
 նորա մերձ էր ՚ի վայր ընկենուլ, մինչ  
 ելրորդ անգամ գոչեաց պատանին՝ լուր  
 ինձ Հայկանգուիստ, զոտիւքի՛ քովկ-  
 փարեալ մուրամ աւասիկ: Ի առդ մու-  
 րալ, յուշ արար կուսին զբան Շողի-  
 նայ . զինչ մոյս զոր առնեմս, մուացայ  
 զոր խոստացայ, ասաց . ծուատեաց  
 զծաղիկն, ընկեց, և չոքաւ ՚ի բաց:

Գ Լ Ա Խ Խ . Ե .

Մ Ա Ր Դ Ա Ս Պ Ա Ն .

**Թ**էալէտե արհամարհութեամբ թողեալ Հայկանդիսոյ զ Օ տրան՝ մեկնեցաւ ՚ի բաց , այլ թէ որպէս իտշիւ . մանեցաւ , որպէս ելաց , և որպէս դառնացաւ յանձն իւր , թողում պարկեցաիցդ ձեզ՝ ինքնին խոստասիրել :

**Ա**տրակ Հայոց սպարապետ , **Գ**որիս Կադմեայ՝ Կորդուաց Խշան , Շաւենակ Ազճնեաց բգեաշխ , Ասիդ՝ Խշան Հրէայ , և Ախան դեսպան , Վարաց՝ գլուխ դաւադրացն Արմաւրայ , ստէպ ժողովէին յապարանս Քրմապետին Արշերայ . և խորհէին խորհուրդ չար զՀայրենեաց : Ախան՝ օր աւուր առաւելոյր ՚ի խոստունս իւր զմեծամեծ պարզես և պակս ՚ի դիմաց Արքոյի իւրում . և թշուառականքն այնտքիկ առաջնուր սփռելով ոտից զՀացն պատրաստեալ ՚ի սան՝ մուրացկօրէն անկանէին ՚ի գրունս օտարաց՝ փշրանցն ակընկալ : Օ ի ով յորդոյն հատեալ ՚ի բերանոց զպատառն անուշակ՝ արկանիցէ շանց օտարուտեաց : Զնորեալք , խե-

լազարեալք և կատաղեալք, որպէս և  
էինն զահերէցք ասլստամբութեան ընդ  
սատակումն չորեքին սրիկոյից, մեծա-  
պէս զուարձացան, երբ լուսն թէ Ա-  
բեղէն ամբարտաւանութեան զեղջիւր  
ամբառնայր . և ունէր զգաշնակ պատ-  
րաստի ՚ի դաւ : Ուստի և միաբան դոչէ-  
ին, “ յուստահատ մեղաւորս է մարդն, զոր  
խնդրեմք ահա : ” Եւ զամենայն ջանս  
իւրիանց յարմարէին ՚ի դիւտ նորուն :

Խղճ չարեաց լցաւ : Աբեղէն զտաւ.  
եկեալ եկոց ՚ի ժողով նոցա , և սաստ-  
կացոյց զտակ պահանջից իւրոց : Առա-  
ջին Հոգ նոցա էր բառնալ զԱպղենակ  
Ախնի, զհրամանահանաշխարհիս Հայ-  
ոց, զոր մեծապէս պատուէր Արքոյ ՚ի  
վերոյ քտն զամենայն իշխանս Հայոց :  
Յորմէ ջուիրք ապստամբից դողոյին ,  
և Արշէն մախայր քրմապետ՝ առաւել-  
քան զղժոխք : Տնւք ինձ զտա՞կ պա-  
հանջիցո , ասոց Աբեղէն և ՚ի վաղիւ  
յայս ՚նիշ ժամաւ , կամ վերացուցից  
զԱպղենակ ՚ի զասս ՚Վայ անմահից ,  
կամ իջուցից ՚ի դժոխս , մլով և եթ  
հարուածով :

Այս ճար չկայու . Աբեղէն ոչ զի-  
ջանէր , և Արշէր ըղձայր փառացն հա-  
սանելոյ՝ որոյ ճանապարհ անկանէր ըղ-  
շիրմաւն Վաղենակայ : Ուստի ետուն  
զորինչորքան և կամնցաւ . ՚ի վաղիւ ան-  
դրը վերացաւ Վաղենակ բարեկամն Եր-  
ուանդայ , և բարերար Հայրենեաց :  
Այնինչ աւետիք մահուան նորա հա-  
սին յականջս ապստամբացն , միաբե-  
րան աղաղակեցին , արդորե զարհու-  
րելի է Աբեղէն , և կատարեցին զուն  
ուրախութեան իւրեանց՝ ՚ի գիշերային  
խնջոյս . Քրմապետին Արշերայ :

Խսկ Երուանդ ընդ զուժկանն զար-  
մացեալ և զայրացեալ , քարոզ կարդալ  
՚ի քաղաքին հրամայէ , և հազար կշո-  
սկոյ խոստանայ , որոց միանդամդը-  
տանել կարիցեն զսպանող Վաղենակայ :  
Ոչ յետ աւուրց ինչ բազմաց զկնի քա-  
րոզին : Երեեցաւ յայտնութիւն ինչ կա-  
խեալ զրբմաց տաճարաց , և ՚ի զլուխս  
պողոտայից Ամմաւրայ՝ օրինակ զոյս :

### ԱՐՄԱԿՐԱՑԻ Ք.

Խղձք են ձեզ իմանալ թէ ով իցէ մարդասպան Վա-  
ղենակայ , վասնորոյ ՚ի նանիր աշխատութիւն խնա-

յի լով ձեր, ասեմ. թէ ես Աբեղէն, սպանի զնաւ  
Միանգամ և եթ մխեցի զդաշնակ իմ ՚ի սիրա նորաւ  
և զգին զէշ տրկի ձկանց Երտախայ : Արքայ խոս-  
տանայ հազար կշիռ ոսկւոյ՝ որոց զացեն զիսկ այլ  
ես խստանամ զերկու հազար, որոց ունիցին :

ԱԲԵՂԵՆ :

ԳԼՈՒԽ . Զ .

ԵՐԿԱՏ ՄԵՇ ՄԱՐԴ ՅԱՐՄԵԿԵՐ :

**Չէր ոք յաշխարհիս Հայոց,** որ  
յիշէր թէ լուաւ երբէք այսպիսի ար-  
համարհութիւն օրինաց երկրին, և ան-  
պատկառութիւն զերեսաց թագաւորին :  
**Ամենայն քաղաքն գլուղեցաւ խոսվու-**  
թեամբ, ամենայն ոք անձին և տան  
զգուշանայր, սկահք գիշերոյն երեքալա-  
տիկ պատկեցան, և ոստանիկ զունդք  
աղատաց խուզեցին խորշոց ՚ի խորշ քա-  
ղաքին, բայց և այնպէս ոք ոչ ետես,  
կամ լուաւ ինչ զհետոցն Աբեղինի :

**Քուրմք ՚ի քարոզս իւրեանց զար-**  
թուցանեին զթմւեալ վրէժինդրու-  
թիւն Աստուածոցն ՚ի կոլուստ ապա-  
սումն չարագործին այնորիկ : **Տիկնայք**  
նուաղէին ՚ի լուր անուանն և եթ. զի  
մլ ապահովէր զնոսա՝ թէ Աբեղէն

յաւուր միտւմ չղիցէ ինքեանց զայն  
 պատիւ , զոր և եղն Հայկանդիսոյ :  
 Պահաւունք երդնոււին ՚ի վառս դիցն Ա-  
 նահտայ . թէ Աբեղէն՝ քաջ ծնաւ , ուս-  
 տի և զօրութեամը նոցա վրդովէր՝ զաշ .  
 Խարհս Հայոց : Ու խազգեաց գերդաս-  
 տան Ա աղենակայ՝ կարկամէր նզովս ՚ի զը-  
 լուիս ապիրատին , արտասուք մեր ա-  
 սէին եղիցին նմա ՚ի ձով ծծմբոյ , և  
 յարուացեն կոհակս ալեաց ՚ի վերայ Ա-  
 բեղինի : Արքայ ոչ պակաս քան զեռ-  
 սա վրդովելով , երդնոյը ՚ի զեղն Ա-  
 րայի : ոչ ուտել և ոչ ըմպել : մինչեւ  
 զտանիցէ զնա , և չարաչար պատուհա-  
 հասիւք կորուացէ : Հուսկ ուրեմն նըս-  
 տեալ նորա ՚ի սրահի ապարանիցն ար-  
 քունեաց՝ ընդ երեկս աւուր միտւմ պար-  
 տաւորեցաւ այսպէս խոստովան լինիլ :  
 “ ՚Ի վերայ այսր ամենայնի՝ այր մի  
 միայնէ Աբեղէն , որ զայն առնել կա-  
 րասցէ , զոր Աբեղէն արար . այր հան-  
 հարեղ և քաջ լիցի հայրենեաց , և ե-  
 թէ զօրավարեալ պատանեաց՝ ընդ ըը-  
 ռամբ հաւաքիցէ զիէս աշնարհի : ” Հայ-  
 եաց յիս ուրեմն՝ թեզգաց Աբեղէն ՚ի

Ճայն ինչ զարհութագին , որ զանխուլ  
մտեալ ընդ զաղոսու զի ապահանից ե-  
կաց առաջի նորա , հոկայ ոմն վէթ-  
իարի , արկեալ զիւրեաւ զօթոց խաւա-  
րային : Պաժնդակահայեաց գէմք կեր-  
պարանաց նորա զաշխարհ դողացուցու-  
նէին , յորմէ զահի հարեալ Երուան-  
դայ , ով իցես աղաղակեաց : Աբեռէն .  
Տեսանես զիս , և ոչ կարես կասկածել :  
— Բայց և այեպէս՝ Արեղէնն եմ , բա-  
րեկամ սպանելոյն Աաղնեակայ , և զե-  
րի ստրուկ տէլութեան Հայոց :

Աներկեան ՚ի ճակատու թշնամեաց Եր-  
ուանդ , որ միշտ զերկիւղ արհամարհէր  
և զմահու ծաղը առնէր , յուշոյ մտաց  
կարկամեցաւ ՚ի տեսիլ սրիկային . որ  
անփոյթ արձանացեալ եկաց առաջիւր ,  
ոչ պատկառելով յերեսաց Մեծաղունին  
՚ի մարգիանէ աշխարհիս Հայոց : Ան-  
վրգով համարձակութեամբ ակնարկի  
արտր առ նա , և քաղցրութեամբ ան-  
գամ զիջաւ ընտելաբար ժնկոտալ ՚ի  
վերայ նորա : Օ արհուրելի՛ ես Արե-  
ղէն , ասաց Արքայ յինքն եկեալ , և  
արանց քստմնելի : Պատասխանեաց ըս-

կայն . զարհուրելի , արդարեւ այդպէս  
 համարիս՝ դու զիս , խնդամ : — « Բ . ըս-  
 տըմիելի և ո՞ւ կարելի է , կամ ոչ է կա-  
 րելի : Գառծք արտաքուստ նշան լի-  
 նին ներքին մտաց դառնութեան , բայց  
 տակաւին բարձակից եմք իրերաց՝ Պա-  
 ռ և Ես : Երկու մեծ մարդ կան յլլրմա-  
 ւիր , մին Պառ ես , մին Ես . դու ՚ի քու մ  
 բաձու , և ես յիմում սպաշտաման : Ար-  
 քայ ոչ կարեր զսպել զծիծաղ իւր ՚ի  
 վերայ հայմարձակախօսութեան սրիկայ-  
 ին , բայց Արեգէն շարունակէր , “ մի .  
 մի ծաղը անհաւատութեան , եթէ հա-  
 ճայ թուիցի քեզ : Թոյլ տուր ինձ .  
 թէպէտեւ սրիկայ իցեմ , զանձն ընդ  
 Արքայի հաւասար առնել : Բանզի  
 յանդգնութիւն խել չէ ինձ զանձն  
 ընդ անձին բաղդատել , զորոյ կեանք  
 ՚ի ձեռին ունիմ , ուստի և իրօք ստորեւ  
 քան զիս : ”

Արքայ եւ . որպէս թէ խուսել ՚ի  
 նմանէ կամլցի : Խոկ Արեգէն կապկօ-  
 րէն ժնկուտալով կալաւ զառաջս նո-  
 րա : Կաց ասէ . զէպէք դուն ուրեք կա-  
 ցուցանեն երկու այսքան մեծ Արեար ՚ի

միում անձուկ վայրի՝ կը ց ուր կաս , զի  
տակաւին ունիմ խօսելոյ ինչ ընդ քեզ :

Ե՞ւր Աբեղէն , ասաց Արքոյ ցորի-  
կայն , յինքն ժողովելով զամենայն շու ք  
զմեծափառութեան թագաւորի “ Ի՞նու-  
թիւն շնորհեալ է քեզ մեծամեծ արտու-  
նութիւնս , և խիստ է քեզ յումպէտս  
վարել զնոսին : Այուրբ է բերան թա-  
գաւորի , և ահա խոստանամ քեզ թո-  
ղութիւն վասն անցեալ գործոց քոց .  
և սպաշտապանութիւն վասն հանդերձե-  
լոցն , միայն թէ անուանեա ինձ , թէ  
ով վարձեաց զքեզ առ ՚ի վաղձան Ա ա-  
ղենակայ , հրաժարեաց ՚ի հեղլոյ զա-  
րիւն արդար . և կեցջիլ ՚ի սպաշտաման  
արքունի : Խակ թէ ոչ փախինը , հե-  
ռացինը , և թաքինը յաշաց իմոց . ա-  
սլա թէ ոչ — ” Աբեն . Ժողութիւն  
և սպաշտապանութիւն առես , — Ես ՚ի  
վաղուց թօթափեցի յանձնէ զհոգ այդ-  
օրինակ սնոտեաց : Աբեղէն կարող է  
անձամբ զանձն սպաշտապանել , առանց  
օռար օգնութեան . խակ զթողութենէ՝  
զոր խօսիս , մահկանացուք ոչ կարեն  
թողուլ մեղս մեծամեծս , որպիսի իմ

ե՞ւ յանցանք : Յորժամ Պահք ՚ի դա-  
 տաստան Գեկեսցեն . տաց անդ զհամար  
 գործոց խմոց , բայց ոչ ուրուք՝ մինչ  
 ցայնժամ : Ասմիս գիտել ով կաշա-  
 ռեաց զիս առ ՚ի վախճան Վաղենմակայ՝  
 ասացից քեզ , բայց ոչ այսօր : Ասես  
 ինձ փախնուռ աստի՛ ընդէլ — ՚ի քէն  
 երկնչելով : ը՞հ — յԱրմաւրան երկն-  
 չելով , բէք : — Արեղէն փոյթ չունի  
 զԱրմաւրայ : Ասես թողուռ ինձ զայս  
 գործ՝ ընդունիմ Երուանդ . բայց դա-  
 շամբ , — Ասա որ դաշամբ , դարձոյց  
 Արքայն եռանդեամբ . բաւական է  
 տասն հազար կշռ ոսկւոյ գնել զիո-  
 րուստ քոյ ՚ի Հայոց : ” ԱԲԵՆ . Ես քեզ  
 քսան հազար տաց , եթէ յետո կոչես-  
 ցեն զայպնն՝ որով այպանեցեր զԱրե-  
 ղէն՝ այսքան չնչին կաշառօք : Ոէ Եր-  
 ուանդ , մի միայն ինչ կարէ համոզել  
 զիս ՚ի կամս քոյ , կաշառեա ինչ զքոյր  
 քոյ . զի բիրեմ ես զՀայկանդուխտ զօ-  
 րիորդ Հայոց Վեծաց : ԵՐԵՎԱՆ . Օ ինչ  
 հրէշ , — Կորիր կորիր : ԱԲԵՆ . “ Համ-  
 բէր , համբէր , մի բարկանար . գիտեմ  
 որ լաւ եղբայր ես , միայն ասա ընդու-

Նիս զեմբգաշն , թէ ոչ : ” Երանեառ . Խանդ-  
րեա որքան կշխոս և արծանթոյ կամ  
ուկւոյ կամքք իցեն քեզ , և տաց մի-  
այն զի՝ մի ևս թունաւորեսցի օդ Ար-  
մաւրայ ՚ի ժահըալից շնչոյ քոյ : Աբեւ  
Աւղմուդ : — Վիայն յիսուն բիւրուց  
վաճառեալ եմ զարդիս զարիւն երկուց  
մտերսաց քոց՝ զիսունենայ և Շ եկա-  
նայ , տուր ինձ զհայկանդուխտ , և թո-  
ղից քեզ զնոսա՝ կենդանիս : Երանեառ .  
Չարածնունդ . չունի շանթ Արամազդ  
վասն քո : Աբեւ . Չտամ ինձ զքոյր  
քո — բայց անաս : տիւ մի և զիշեր .  
և ահա խոսեցու զայս : ” Եւ իբրեւ ա-  
ւարտեաց զբան իւր հանեալ զծեսն ՚ի  
զբապանէ լի փոշով բաւրակի՝ ցնդեաց  
յերեսն ՚ի վեր Արքայի , և մինչ նա-  
սկանէր շիել զաչս ՚ի կսկծոյն՝ Աբե-  
զէն գնաց անհետացաւ ՚ի միջոյ :

**Գ**ահերէցք ապատամբից ժողովեալք  
՚ի տաճարի Արմապետին Արշերայ նա-  
ւակատիս կատարէին սպանդարամետիցն  
**Գ**ից , յորժամ Ամեղէն ՚ի ներքս մը-  
տեալ աւետիս ետ նոցա զմահուանէ

խորենայիւ Արքալետանն Շիկանայի  
 Ամենեքեան Ճափս Հարին ընդ լուր այն,  
 և պսեն , մնաց արդ Օ ուրան միւ-  
 այն .— “ Բարէ ահեղէ Օ ուրան , ա-  
 սաց Արեղէն , բայց Արքայի ամիս փնդ-  
 րի , մինչ յուշի գայ վերստին :

---

Կառարկան Գիւք Երկրորդ Վարդ ղիսի :

Գ Տ Բ Ք Ե Բ Բ Ո Ր Դ Վ Ա Ր Դ Գ Տ Ս Ւ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ս Տ Բ Ը Հ Ա Ր Դ Վ :

ՀԱՅԿԱՆԴԻՈՒԹ անդրի պարծանաց  
զեղուհեաց Հայոց՝ անկեալ գնէր յան-  
կողնի և հալ և մաշ լինէր օքըստօրէ .  
ոչ ումեք զպատճառ խօթութեան յայտ-  
նելով : Այսէր նա զ Օ ուրան , բայց  
ով էր՝ որ տեսեալ զպատանին և ոչ  
սիրեաց զնաւ Բայց եթէ Հայկանդուխտ  
հիւանդ գնէր , Օ ուրանայ յաւն ով  
զննէր : Առանձնացեալ ի բնակութիւն  
իւր , իսորշէր յամենայն երթեւեկաց ,  
և յաճախ ճանապարհ առնէր ի հեռա-  
ւոր և ի հովասուն կատարս լերանց ,  
թերեւս հրաշալեօք բնութեան կարի-  
ցէ հանդուցանել զխորհրդոցն յարուց-  
մանս : — Օ այսու ժամանակաւ մեկ-  
նեալ էր ի քաղաքէն , և ոչ ոք զի-  
տէր , թէ ուր արդեօք հանդուցանիցէ

զա իս խորհրդոց իւրոց։ Ա ինչ այս՝ մինչ  
այն՝ գլութեցաւ Արմաւիր, ելին հար-  
տունք յառագաստաց, և փեսայք ՚ի  
տաճարաց. ծերք ՚ի ցուօր յեցան իւ-  
րեանց, և տղայք ՚ի վազ, զօրք աշ .  
խարհին, աւագանին և Արքայ իսկ  
գլխովին՝ ընդ յառաջ ելին Ասենակայ  
Բղեշխի Տայոց աշխարհի, և փեսաւէր  
եղեննմա գեպ տաճար Հայկանգիսոյ.  
զի զայր ՚աս փեսայ փառացի Հայոց  
աշխարհի :

Գալուստ ՚ասրա, որ եթէ ամսով  
յառաջ՝ խնդութիւն մեծ առնելը Ար-  
քայի, այժմ ոչ ինչ յիրիք սակի ե-  
գաւ. քանզի հիւանդէր Հայկանգուխու  
և ոչ ժամանելը ընդունել զնա, Օ ա-  
ռուս վեց եկաց Բղեշխ մեր յԱրմա-  
ւիր, և յեօթնելորդու մն դառւ դի տա-  
պաստ անկեալ յանկեան ուրեք՝ ՚ի սլար-  
տիզին, Արքունեաց։ Առուսեր ՚ասրա ա-  
ռընթեշ զիշոյն կայր՝ մերկ և արիւ-  
նաթաթաւ, յուռութունք բազպանի  
՚ասրա չեին ՚ի միջի, այլ թերթ իմն հա-  
տեալ ՚ի ՚նմանե, և կապեալ ՚ի կուրծ  
՚ասրա՝ պարունակելը զայս իմաստ։

Ա Ե ՞ Ք առ Հայկանդուխտ ժողոհիցի ։ որ չեցէ  
պատրաստ փորձել զԲաղտ Ըսհնական։

### ՄՐԻԿԱՑ ԱԲԵԳ ԷՆ

Ուր վախեայց, ուր թաքեայց, ուր  
մխիթարեցայց, գոռաց Երուանդ՝ ի հա-  
սանել զուժկանիս։ Եւ ուր արդեօք  
Օ ուրան մեր։ Ա Ե ծ եռանդեամբ ըդ-  
ձայր գարձի նորա, թերես մխիթա-  
րեցի նովաւ, և ոչ երկար ձգեցաւ,  
զի ահա գարձաւ ։ Օ ուրան։ Աղջոյն ե-  
կիր Պատանին, այլ մի ևս զբկես-  
ցես յընիերակցութենէ քումմէ, վհա-  
տեալ ուսկէս և եմս՝ ընդ կուսուստ հո-  
յակապ իշխանաց իմոց՝ ասաց Արքայ։  
Օ ամենային քաջ զիտեմ Արքոյ, պա-  
տասխանեաց ։ Օ ուրան, իսարամանին  
խորտակեալ զշըթայս իւր՝ արդ յԱր-  
մաւիր բնակլի՝ Արեղէն անուամբ, զըր-  
կելով զիս յայմ ամենայնէ, զոր պատ-  
ռական զնեմ ինձ։ — Հա ։ Հա ։ ըդ-  
դոյշ լեր անձին քում, զուցէ և քեզ  
հանդիպեցին Ա իթխարին, — Ես փու-  
թամ ընդունիլ զզեսպան Եղիպտացւոց  
իշխանի։ բայց յերեկոյն՝ — ընդհա-  
սեաց Արքայ։ քանզի ելանէլ Հայ-

կանդուխսք ցամաքեալ անձամբ և դիմէր անդանօր յայցելութիւն սիրայնոյ  
 խրպւմ, զոր ետես և շիկնեցաւ : **Օ** ու-  
 րան յարուցեալ ողջունեաց զեա իս-  
 րին ինն ակնածութեամբ : — **Կ**աց ասէ  
 Արքայցպատանին, մինչե զուցէ փո-  
 թով դարձայց այսրէն . և գնաց : **Հ**այ-  
 կանդուխտ ընդ պատուհանն հայէր ար-  
 տաքս, հուպ մատեաւ առ նա **Օ** ու-  
 րան, և ասաց . տակաւին բարկացեալ  
 ես ՚ի վերայ իմ դժխոյ : **Չ**եմ բար-  
 կացեալ ՚ի վերայ քոյ, ասաց **Հ**այ-  
 կանդուխտ և զամօթի հարաւ . ՚ի միտ  
 բերելով զանցս մանուշակին ՚ի պարախ-  
 զե : **Ա**ւրեմն թողեալ է քոյ զյանցանս  
 իմ միանդամայն, — **Յ**անցմնք քո .  
 կրկնեաց **Հ**այկանդուխտ քաղցր ժըպ-  
 տանօք, այս եթէ յանցանք ինչ ի-  
 ցէ այն՝ բոլորովին թողումքեզ : **Մ**ե-  
 ռանող ողիք պարտին թողուլ յերկրի  
 զե յերկինս թողութեան արժանասցին .  
 այժմ մերձ եմ ՚ի մեռանիլ և թողում  
 քեզ : — **Օ** ինչ ասես դժխոյ : **Հ**ա ի-  
 րաւի մոռանիմ, ասաց **Հ**այկանդուխտ .  
 զե թէպէտե յերեկեան հետէ լքի ըլ-

մահիմս հիւանդութեան իմոյ, + սակայն  
 թուի թէ փութով դարձոյց անդրէն :  
**Ա**սնորոյ. — վասնորոյ դուներեսջիր  
 ինձ իշխան, վասն տառապանացն՝ զոր  
 ետու քեզ յանցեալ պատեհին ՚ի պար-  
 տիզի անդ : **Օ**ուրան լուռ ևեթ մնաց:  
**Ա**չ թողոցուս ինձ, ասէ դժխոյն . ով  
 գժուարամք ես զու և վրիժահան :  
**Օ**ուրան աչս ՚ինա կրթեաց, Հայկան-  
 դուխտ զձեռն կարկառեաց առնա և ա-  
 սէ, արդ արհամարհիցես զձեռն տա-  
 րածեալ առ քեզ . արդ զամենայն մո-  
 ռասցիս թէ ոչ : **Վ**ուանալ . քաւ և մի  
 լիցի ինձ, ամենայն բանք քո և հա-  
 յեցուածք այնքան ՚ի խոր գրօշեալ կան  
 ՚ի տախտակս կրծոց իմոյ, մինչ ան-  
 հնարին է . **Օ**ուռանայ ՚ի **Օ**ուրանայ  
 ջնջել զեռսա : **Վ**չ կարեմզանդէսն մո-  
 ռանալ, յորում զու կացեր հանդիսա-  
 դիր տուաջին, կամ զգործն՝ յորում զոր-  
 ծագիր զքեզ տեսի կենդանի : — Իսկ  
 առ թողութիւն — կայեալ զաջոյ նո-  
 րա՞ ակնածութեամբ համբուրեաց, և  
 ասէ . երաներ էր ինձ **Տիկին**, թէ միշտ  
 այնալէս մեղանչեիր : և ես այսալէս նե-

բէի , ըսոյց աւաղ զի դարդիս ոչինչ  
ունիմ թողուլ քեզ :

Երկոքին ևս լռեցան ընդ հալուստ  
ժամի , մինչեւ Հայկանդուխտ եհարց  
ցնա . կարի երկար հեռացար յԱրմաւ-  
սայ , շատ շրջեցար արդեօք : Զուր .  
Ըրջեցնյ շատ : Հուն . Եւ քաղեցեր ըդ-  
ճանապարհոյն քեզ զրօսանա բազում :  
Զուր . Բազում . և յամեն ուրեք զհամ-  
բաւ Հայկանդուխտոյ : Հուն . Խշանն Աղ-  
ուանից միւսանդամ մեղիցես առիս Զուր .  
Փոքր միւս ևս՝ այլ ոչ յաւիտեան .  
թուի թէ գուշակիցես զոր ասելն կա-  
միցեմ : Հուն . Պարձեալ ճանապարհ  
առնել : Զուր . Այս . — զնալ և ոչ  
դաւնալ վերսախն : Հուն . Ոչ դաւ-  
նալ վերստին՝ թէ ինչ . ո՞հ ոչ այդ-  
պէս Օ ուրան , թողուցնս բա զիս :  
Խռեցաւ . որպէս թէ ամաչելով ընդ  
անխոհեմ խօսս իւր . և խակոյն ուղղեաց  
զբան իւր այսպէս : Ասել կամեի թէ  
թողուցնս գու վեղբայր իմ , որ այս-  
քան սիրէ զքեզ : Զուր . Որդինն Ասմ-  
բիւսեայ հատուած , զնացեալ յերկիրն  
Պարսից՝ հիմն գնենորոյ իշխանութեան

անդանօր . Ճանապարհ արարից առ նա  
 թերեւո **Ճակատագիրք** յաջողնոցեն ինձ  
 զօրավարել կնտի ուրուք ընդ նովու ,  
 յայնժամ ՚ի վառն դրօշելով զափառկեր  
**Հայկանդիսոյ** , տաց ՚ի բերանո զօրաց  
 խմաց աղաղակել **Հայկանդմանիստ** . և  
 այդ անուն անդարսելի կացաւոցէ զիս  
 ՚ի մըցմանո Ճակատաց : Հայկանդ . **(Ծա-**  
**զըր** առնես զինե՝ իշխան . այս և ան-  
 դժաբար իսկ խոցուես զսիրա . Զարան .  
**Յատուկ** ինայել կամելով թուացո-  
 ղութեան սրտի քոյ՝ թողում զԱրմա-  
 ւիր , ներկայութիւն իմ թերեւո անհան-  
 դիստ առնե՝ զոգիու անուշակ . վասնզի  
 չեմ ես մըյրն երջանիկ , որոյ տեսու-  
 թիւն նախասահմանեալ իցէ ՚ի հաճու-  
 թիւն քոյ . խուսեցայց միայն՝ զի մի խո-  
 ցատեցիցն զքեզ : Հայկանդ . **Եւ** զու յի-  
 րաւի դիսաւորեալ իցես թողուլ զԱր-  
 քայ , որոյ բարեկամութիւն . անկեղծ-  
 է ընդ քեզ . և ուր՝ անդասում : Զարան .  
**Մեծ** է ինձ բարեկամութիւն նորա .  
 այլ անբաւական յերջանիսութիւն իմ :  
 Եւ եթէ դիցէ զողջոյն թաղաւորութիւն  
 իւր ընդ ստիւք խմովք , տակաւին եր-

Հանկացուցանել ոչ կարէ : Հային՝  
 Բարէ , այսքան թանել իցէ քո երջան-  
 կութիւն : Զուրուն . Այս թանել՝ և հա-  
 զար անգում . բայց մի ինչ կարէ երջան-  
 կացուցանել զիս , վասնորոյ երես անկեալ  
 պաղատեցի : Օ այս ասելով կալաւ զա-  
 ջոյ չքնաղին , համբուրեաց և կրկնեաց  
 անդրէն , մուրացայ զղոյն Հայկան-  
 դուխտ , և ունայն ելի : Հային՝  
 բորբնակնախապաշար , ասաց Հայկան-  
 դուխտ , և ոչ զիտէր զինը չ արասցէ :  
 Օ ուրան սողաց հուպ առ նա , և աղեր-  
 սական ձայնիւ ասաց , Հայկանդուխտ :  
 Հային՝  
 Օ ինը խնդրես յինէն : Զուր .  
 Օ երջանելութիւն իմ : — Առ որ ընդ  
 երկար պշուցեալ հայեցաւ Դժիոյ Հա-  
 յոց . և յանկարծոկի սթափ առեալ .  
 թող զիս՝ ասէ , հրամայեմ քեզ . թող  
 զիս : Օ ուրանայ ակնկալութիւնք հա-  
 տան , և յոյս վերացաւ , ամօթահար  
 և տրտում գլուխ խոնարհեաց նմա ՚ի  
 նշան հնագանդութեան հրամանին .  
 և թող զնա բարեօք մնալ յաւի-  
 տեան : Այլափոխեալ կուսին ՚ի հը-  
 րեշտակ ինչ հոգեզէն՝ ձեւն պարզեաց

առ նու , կայսւ զաջոյ սպասաւեոյն և  
սեղմաց ՚ի վերայ լուսեղեն շեռաց իւ-  
րոց . Աղաղակեաց , Օռլանն . քդ եմ  
ես . և անկաւ ուշաթափ առաջի նորա :

Գ Լ Ո Ւ Խ Ա . Բ .

Խ Ա Ս Ա Խ Մ Ն Ա Տ Ա Կ Ա Ր .

Արդ ովէր այնքան երջանիկ . որ-  
պէս զաւարթացեալն Օռլանն Ար յաղ-  
թեաց ՚ի վերջոյ . ընկալու զխոստումն  
հաւանիութեան ՚ի շըթանց Հայկանդիւ-  
տոյ , զուճո իջեալ յարոյց զեա , որոյ  
միայն յիշատակ ասութեանցի՛ բաղում՝  
անդամ Ճ'նշէր արտասաւ յաչաց իւ-  
րոց , զօրոյ զեղ ՚ի տունջեան ակսանէր .  
և շեորհս ՚ի զիշերի երազէր :

Հայկանդուխտ հայէր ՚ի նու խորին  
ինն յափշտակութեամբ , և մոռանայր  
զիւր մահացու ընութիւն . Արածէր թէ  
սենեակն այն փոխեալ իցէ ՚ի գրախտ  
ինչ երկրառոք . և վերին Աղոյց երամ  
իջեալ անդամօք սրբազնենին ինքեան  
զանձնեղ բերկւութիւն սրահուն՝ աներե-  
խնդակցութեամբ յարեանց :

Թէ շուտէան յընթացս կենաց մարդ-

կան միանգամեւ եթ պատահէի ժամբայս-  
քան երանական , սակայն և այնպէս  
երանի նմա , որ յոդոց հանիցէ վազն  
զալատեան այնորպէ : Երանի . յորում  
եթէ հասանիցի , արժանի իցէ վայելից  
նորա . բայց և երանի նմա , որում այդ  
պահ վաղ եանց , և թող զկնի դրոշմ  
հետոց վայելութեան . զի և յիշատակ  
այնպիսեաց՝ պատուականազոյն է ճշմա-  
րիս սիրահարին : Ոչերես երեակա-  
յական և առ աչօք յիուք իմն երեխոցի  
այս յաջ իմաստոց , բայց ևս առեմ ,  
թէ ՚ի ներքոյ արեգական չեք ընտ-  
երջանեկութիւն զմայլուն՝ առանց երեա-  
կայութեան :

Պարձաւ Արքայ Երուանդ ըստ  
ժամադրութեան իւրոյ , և առեալ ըզ  
Օ ուրան մեկուսացաւ ՚ի սենեակ ինչ  
առանձինն և առէ , զիսիցես Օ ու-  
րան + եթէ քանի քանիք ՚ի պատահնեաց  
նասան յարձան ինտութեան զայ-  
կանգիսաց : Զարդան . Օ արմանամ . զի  
նչ և Օ ուարթոնք երկելից : Երանդ .  
Համ , և զու Օ ուրան : Զար . Ատոյդ  
իմն է Արքայ : զի չեմ ևս ինչ ա-

ռաւելքան եթէ պատանի պահպուխտ :  
 աղքատ և անծանօթ ՚ի քաղաքի այս-  
 մեկ . ուստի և յանդդնագոյն խոկ հա-  
 մարելի . եթէ ձեռներէց լինիցիմ՞ի խըն-  
 դիր այդպիսի . բայց տակաւին անտա-  
 րակոյս հաւատամ , թէ Արքայն Հայոց  
 Վեծաց , ոչ խթիցէ զքոյր իւր ՚ի ծոց  
 այնպիսեացն ՚ի պատանեաց աշխարհիա ,  
 որոց պատիւք լցեն արկեղք դանձուց  
 նոցա , փառք՝ տարածութիւնք կալու-  
 ծոց , և պսակքն՝ փառաւոր վերտառու-  
 թիւնք : Օ ինչ օգուտ ալճնիլ փա-  
 ռօք հայրենեաց , այնինչ ինքեանք ա-  
 նարիք՝ օտարացեալք ՚ի փառաց նստի-  
 ցին յամենայն ժամ : Խոստովանիմ ,  
 Քաջ արանց , թէ մինչ ցարդ ոչ ինչ  
 արարի արժանի մեծի վարձուն , որպի-  
 սի է Հայկանդուխտ . բայց ոչ շատ ՚ի  
 վերայ անցանիցէ , մինչ արարից , կամ  
 մեռայց :

Արքոյ խոժոռութեամբ իմա հայե-  
 ցաւ ՚ի նա , որպէս թէ ասել կամելով .  
 աղքատ հպարտ և մեծաբան : Վինչ  
 կրկնեաց անդրէն Օ ուրան , և ասէ .  
 Հրամայեա Տէր Արքայ , զինչ և կամք

իցեն քո՞ւ զի արարից . և ոյնպիսի ոք  
 եղէց , զի՞ւ ընկալայց քո հաճութեամբ  
 զաջն հաւանութեան Աքնաղին : Նը-  
 րամայեան որչափի ինչ գժուարին և հա-  
 ճոյք իցեն քեզ , ոչ առաւել համարեցայց  
 ինձ զնոսա , քան ՚ի սոսկ զքօսանս : Ա-  
 րամազդդ վկայ , երանի թէ զարդիս խը-  
 ռովեալ էր ամենայն տէրութեան Հա-  
 յոց , և բիւրուց սուսերաց մերկացեալ  
 ընդդէմ Արքայի , որպէս զի՝ զամենայն  
 ընդ ոտիւք խորտակելով , ընդունէի առ  
 ՚ի քէն յաղթանակ մենամարտի զՀայ-  
 կանդուխտ (Օրիորդ : Եւստան) . Ի բա-  
 զում պատերազմունս միայնակ քա-  
 չացայ՝ առ ամենայն վտանգ անձին  
 անդաց , ՚ի խոռունս թշնամեայն խռեն-  
 ցոյ , գործ զՄաղղեղանց գործեցի յա-  
 հարկութիւն լսողաց , և ոչ ուրեք ոյն-  
 քան գղղգեցայ յանսասան մասց խոնց ,  
 որքան , ՚ի զահոյս միահեծան տէրու-  
 թեան խոնց : — Այլ պատանիդ լուր —  
 պատուական է ինձ Հայկանդուխտ՝ քան  
 զթագն արքունական , վասնորոյ և ան-  
 հնարին իսկ շնորհել զնա որում զի-  
 արդ և կամք իցեն խնդրելոյ : Կա կայ

վարձ քաջի զործոց և վաստակոց , և  
չիք խիլ վաստակ այնքան սեծ , որում  
իրկնապատիկ ոչ արժիցէ դուստր հա-  
ջին Հայկակայ : Խղճ քո կատարեցի  
եթէ զմուրդապապան Ապաղինակայ և զայ-  
լոց բարձակցաց Արքայի ածցես զառա-  
ջեաւ՝ կենդանի կամ մեռեալ , զահաւո-  
րագոյն սաղար սրիկայիցն զԱբեղէն :

Երջեցաւ զոյն յերեսաց Օ ուրա-  
նայ , զգնաց ՚ի սրահին արքունի՝ խո-  
րին լուսթեամբ : Օ արհուրելի էր  
յոյժ յանձնասութիւնն . վոյ էր՝ զոր-  
մէ կասկած առնոյր Աբեղէն զնենդու-  
թեան և գաւոյ . բայց և այնպէս՝ Հայ-  
կանդուխտ էր յաղթանակին : Հայե-  
ցաւ առնատ խանդաղատութեամբ մեծաւ  
և ընդ հայելն հողիացաւ արիաբար  
ընդունիլ զհրաման Արքայի , և յա-  
ռաջ խաղաց : Եւսանտ . Օ ինչ Օ ու-  
րան , զինչ խորհիցիս արդ : Զանան : Ե-  
թէ մասուցեց զԱբեղէն շղթայ ՚ի պա-  
րանց աստանօր , երդնուցուս տալ ինձ  
զքոյր քո ՚ի կնութիւն : Եւսանտ . Յայն-  
ժամ— և ոչ ընաւ , մինչ յայնժամ :  
Հայելն . Ա Օ ուրան , երկնչիմ յերե-

ասց մահաբեր յանձնառութեան քոյ .  
 Արեղէն զաւածան է , Արեղէն զար-  
 հուզելիք է : Օ դոյշ Օ ուրան : Բէք  
 եթէ հանդիպիցես Ա իթխարւոյն քըս-  
 տըմնելոյ : Զոր . Առց Հայկանընթաւխտ .  
 Տնւր ցիս Արքոյ զաջ հաւանութեան  
 քոյ . թէ Արեղէն ՚ի բուան քում ; տանս  
 Հայկանդուխտ ՚ի ծոց խմում : Եւ . Տամ .  
 տնւր ինձ զԱրեղէն , կենդանի՝ կամ  
 մնաւալ , և ես տաց քեզ ՚ի կնութիւն  
 զՀայկանդուխտ , ահա քեզ աջ ար-  
 քունական :

Վինչ այսօրինակ բանագնաց լինէ-  
 ին , քարոզեաց ժամարքունեաց՝ Ծա-  
 զանթեալ . յուշ ժամանակին թռանի , մի  
 այլ սպոյժ տար : ՚Ի վաղիւն յԱռազօ-  
 տի աեսջիք աչօք զԱհաւորն Արեղէն ,  
 առարկեաց Օ ուրան : Եւ . Ա ՚ի  
 այդքոնին ՚ի խոստմաւնոց առատանար , իմ  
 ՚ի զործն է ուշ : Զոր . Օ իարդ եիցէ  
 Տէր Երքայ , զմի և եթ զայս ինուբեմ ,  
 զի ՚ի վաղիւն հանդէս արարեալ ՚ի տաճա-  
 րին արքունեաց՝ կոչեսցես այսրէն՝ զա-  
 մենայն աւագանի . Պարանն , և յանուա-  
 նէ յականէ զԱրշէր . Բարմապետ , զԱտ-

ըակ Ապարապետ, զԳորիս Ապարմայ՝  
 զԻշխան Կորդուաց, զՇատենակ Աղձ-  
 ներց Բնդեաշխ, զՌոսիդ Իշխան Հրէից,  
 զԱխան Գռեսպան Մարաց՝ այլովքն  
 հանվերձ : Հայիան : Երանի ժամանն,  
 յորում դարձցիս յաղթանակաւ, Եր :  
 Արարից զամենայն ըստ հաճոյից քոց :  
 Զուրուն : Եւ զայս մի ևս : Մի՞ ոք դի-  
 տասցէ թէ առ ինչ միտս կոչեցեալ  
 իցես, — զդրունս պատսպարեսցես զօ-  
 րութեամբ, զի հաւաստեաւ ասեմ : յու-  
 սահատ չարագործ է Արեգէն, յորմէ  
 դիւրաւ զգուշանալ չիք հնար . և մա-  
 հու չափ պատուիրեսցես թոլուլ ՚ի ներ-  
 քըս՝ որք մլանիցամ մտանել յօժարի-  
 ցին, այլ արտաքս ելանելոյ ուրուք  
 թոյլ մի տացեն բնաւին : Եր : Արպէս  
 և խօսեցարդ : Զուրուն : Աեցցէ Արքայ,  
 — Հայկանդուխտ ՚ի վաղիւ յՌուա-  
 զաի, կամ ոչ բնաւ, մնաս բարեաւ :  
 Օ այս ասացեալ՝ ել :



Գ Լ Ո Ւ Խ . Գ .

Ց Ա Ց Կ Ա Ց Ժ Ա Ղ Ա Վ .

Յաղթութիւն . յաղթութիւն . ա-

զաղակեաց Առարակ ՚ի մուտա անդ տա-  
 ճարի Վրամապետին Արշերայ, ուր հա-  
 ւագի եալ էին գահերէցք ապստամբիցն:  
 Ամենայն գործք մեր ՚ի լաւ անդր ըն-  
 թանան, Օ ուրան գարծաւ յԱրամա-  
 ւիր, և Արեղէն ընկալաւ զգին արեան  
 նորա: Առեւ: Օ ուրանայ ոչ հանձար  
 պակաս է՝ և ոչ քաջութիւն: Երանեի  
 թէ կայր և խառնէր նա ՚ի խումբ մեր:  
 Քան տարապարտ մեռանէր: — այլ միշտ  
 զղոյշ է նա: Առբան: Այսպիսի ցնովեալք  
 ոչ զիտեն թէ որչափ ինչ ծածկել պար-  
 տին յօտարաց, գուն: Թուուի թէ Հայ-  
 կանդուխտ խէթ աչօք ոչ հայիցի առ  
 նա: Առբան: Այս մինչ ՚ի վաղիւ, և  
 տեսցես զնա սիրահարիւ ընդ դե՛ և  
 հանի նորա, զի Արեղէն արուին խկ  
 վճարեաց զնա, յիշ հառատա գու:  
 Գուն: Օ արմանք մի իշխանք: զի կըրկ-  
 տեալ զամենայն Աղուանս, ոչ զտի  
 անդ ախուն այնովիսի, որով Օ ու-  
 րան ձանաչի առ մեօք: ամենայն պատ-  
 գամախօսութիւնք, ապսպարանք և  
 թաղթք յայտ առնեն, թէ չիք անձն,  
 տուն, կամ տոհմ, յայդ անուն ծանու-

ցեալ ՚ի համօրէն աշխարհինց Եղբ եր-  
 բեմն՝ ասեն, զի կայր տոհմ ինչ այդ-  
 պէսի, այլ ՚ի վաղուց իսկ շիջաւ, թու-  
 տի իցէ ապա աստանդիկս այս ։ Առէք  
 իցէ ուստի և է . — Ամենեքին գուք  
 հրաւիրեամը իցէք արդեօք ՚ի հանդէսն  
 արքունի ։ Գունք . Առանց խորանաց, Առ-  
 Բարինք, թուի թէ խրատ իմ ազդեաւ,  
 ինչ իցէ նմա, և յիրաւի յայլ իմն  
 կերպ փոխեալ է Երուանդ յետ մահ-  
 ուան բարեկամացն իւրոց ։ Շահ . Այն  
 յուսամ, զի չիցէ դաւ յիրիդ այդ-  
 միկ, — Բարէ եթէ հոտ առեալ իցէ  
 զմերմէ ապատամբութենէ, զինչ յայն-  
 ժամ, գողամ արդարեւ ։ Գունք . Յիմար.  
 որով միջոցօք հոտ առնոյր նա զմերոց  
 մտաց, — այդ անկարելի է, Շահ .  
 Անկարելի ։ — զնա, զնա . ամենայն  
 մօր ծիծ կտրող, ամենայն հայր անար-  
 դող, սմենայն եղբայրասպան և հայ-  
 րանենդ ՚ի ցուցակ լնկերութեան զրե-  
 ցէք, և ասացէք որով միջոցօք Ար-  
 քայ հոտ առնուց զմտաց մերոց . Ժա-  
 ծուկն այսքանեաց ծանուցեալ ոչ զայ  
 ՚ի լուր արքունի ։ Գունք . Ալարզամբաւ .

այսօր Երուանդ է այս մատնեալ՝ ՚ի  
 կնոջէ , սպիտեքին տեսանեն զեղջիւրն՝  
 բաց յինքնենէ , որ ունի զետսա ՚ի զը-  
 լուխ իւրում . սակայն և այնպէս , ա-  
 հա մեզ այս պահ դիսպահով յառաջ  
 վարել զմեր զայս գործ , և բառնալ զնո-  
 րայն կասկած : Շահ . Աւղիլ ասես , արդ  
 ամենայն ինչ պատրաստ է մեզ , որքան  
 շոյտ՝ այնքան և շայեկան : Ադրբ . Առա-  
 րուք ինձ , պարտի իւրաքանչիւր ոք  
 ՚ի մէնջ զինուորիլ , և այնպէս զնալ ՚ի  
 հանդէսն . ապա թէ ոչ՝ Արքայ զինե  
 անտես արարեալ , զնտապետաց պատ-  
 ուէր ետ զումարել զգունդ զօրաց զա-  
 պարանօքն արքունի . ՚ի դաւ ինչ՝ թէ  
 ՚ի հանդէս , ոչ զիտեմ : Գորէ . Առօ զնա  
 զօրովք իւրովք : Շահ . Գուցէ նո-  
 քա զմեզ կորուսցեն : Գորէ . Տէհ կաց ՚ի  
 տան՝ կնամարդի , կաց ՚ի տան , և խնամ  
 տար անարժան կենաց քոյ : Բայց յետ  
 յաղթութեան մերոյ , ոչ զացես դու  
 զէթ զկշիռ մի արծաթոյ — կաց ՚ի տան :  
 Շահ . Անեղանչես առխա , Գորիս Արդ-  
 մայ , — եթէ այր , իցես , կա զսուրքոյ  
 և փորձեա : Բայց եմ , որպէս զհազար

քոյ + այլ ոչ խելադարեալ եբբե զքեզ :  
 Առաջ ։ Թառղվար զայդալիսիս՝ սոս այժմ  
 մեր ՚ի գուշն անվըսէսլք են յաջողուածքը :  
 Առաջ ։ Տուեալ էք նշան մերոցս, երիզ  
 գեղին պատել զայրանոցօք . զի ծա-  
 նիցուք զնոսա : Առաջ ։ Բազմոք յա-  
 ռաջ, Գուշ . Զիք այլ ինչ կարեռը  
 մեզ, ընկերք, լցէք զըաժակադ, միւսան-  
 գամ յաղթանակաւ գումարիցուք առ-  
 տանօր, Շահէ . Թառի թէ բարիոք  
 իցէ մեզ վերստին կշռել զիրան զգու-  
 շութեամբ, Գուշ . Գնան մարդ, զգու-  
 շութիւն չունի ինչ ընդ ապատամբու-  
 թեան, յուսահատութիւն և յանգըդ-  
 նութիւն են նորա խորհրդականք, միւ-  
 սանգամզոր սկսաքն, կատարեսցուք քա-  
 ջութեամբ, և յայնժամ յաջորդեսցի  
 խոհեմութիւն ուսուցանել թէ զինչ  
 ինչ առնել պարտ իցէ ՚ի պահել զտէ-  
 րութիւն : Եկայք, լցէք արդ զըաժա-  
 կըս ձեր, Առաջ ։ Թառի թէ ՚նախքան  
 զելուստ մեր առ Արքայ, բարւոք եղի-  
 ցի միւսանգամ հանգիսլել Արեղինի :  
 Գուշ . Օ այդ քեզ թողումք Ատրակ .  
 և ահա վասն կենաց Արեղինի, ամե-

Նեքեան ըմպեն և ասեն, կիցցէ Արե-  
ղէն. Առ Եւ յաջողեացեն մեզ Պահքն.

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Ա Ր Ա Ը Ե Ա Լ Օ Ր :

Պատերք Հայկայ Պահազանց հո-  
լովեցին զգիշելն զէպ ՚ի լոյս, այլ ՚ի  
ծագել Արեգական պարկեշտացեալք  
յերեսաց սքանչելոյն՝ թողին զանիւն  
ցայդոյ եղբօր երիցու իւրեանց և փա-  
խեան. ՚ի հիմնարկութենէն Արամա-  
յիսոյ մինչ ցիրուանդ Ավակաւակեաց,  
չև էր տեսեալ օր այնքան մեծ և ելե-  
մելի, որպէս էր այս օր յուսոյ և երկիւ-  
զի, օր զարմանաց և օր զարհուրանաց :

Պաշտօնատարքն արքունի վաղայա-  
րոյց կանիսէին ՚ի պատրաստութիւնն հան-  
դերձանաց, Աւագանին ժողովէր ՚ի զահ-  
լիճ մ.ծ. և խորհէր որով մեծափա-  
ռութեամբ երելիցին Արքայի, որպէս  
զի շոք զիցեն հանդիսի նորուն, ամ-  
բոխն ՚ի հրապարակս հաւաքէր, և շը-  
շնչիւն յամէնուստ ելանէր, թէ որպի-  
սի ինչ օրն իցէ. Համաց Այդ:

Օ անիւ ժամանակին կալաւ Օայդ.

սթափացեալ ՚ի քնոյ եւ Արքայ ՚ի զա-  
հոյս իւր , և պատուէր կարդաց զամե-  
նայն ըստ պատշաճի սնօրինել : Առչեալ  
յանդ իման զգանձապետ արքունի , և  
զգալիք յիշատակացն՝ հրամայեաց նոցա  
պատկս մարզաբնտիս և ծամուկալս ան-  
դամանդիս պատրաստել , և սար ՚ի սա-  
րուց իսիւայիցն ածել գնել առաջի ,  
զանկապան կարմիր զոյդ , կօշիկս սե-  
կեայս զոյդ , սուսելս ականակուռս :  
և կամարս սակեզէնս : Անց և Շայդ :

Վմին զկնի յաջորդեցաւ Օ այրա-  
ցեալ , և զարթոյց զայկանդուխտ ,  
որ ՚ի քուն իւրում երազեւով զ Օ ու-  
րանայ , և յարթնութեան թուէր երա-  
զել զնոմանէ : Հողին ընթեռնոյր ՚ի  
գիմաց նորա թէ զին չինչ ընդ միտսն  
անցանէնն . բազումբանիւք միտիթարու-  
թեան խօսէր ընդնամա . նորանոր յու-  
սով յաղթութեան սիրայնոյն վառէր  
զսիրա նորա , բերկրութիւն անպատում  
էր Օրիորդին Հայոց Անձաց . սա-  
կայն ժամն էանց Օ այրացեալ :

Ճառագայթեալն Ճեպեաց ՚ի հանդէս .  
Տիկնայք փափկասունք մեծամեծ նա-

Խարարաց և պետաց աշխարհիս՝ զարդարեալք համակ ՚ի հանդերձո պանծայիս և ՚ի զարդ ո, ՚ի մանեակս մարդացախա, + և ՚ի քայառ անդամանդիս, բստեաց բազանօք, սակեայ պալարանջմնօք, յակնթի գնուքոք, և շափիւղեան շարոք, բազմութեամբ նուժշաաց նազեցան զեղան նստան ՚ի տաճարին Հայկանդիսոյ. և խօսեցան զ Օ ուրանաց խելազարեալք ՚ի զեղն, զումմէ այլոյ ապա խօսիլ կարէին: Ը իջաւ Ճառագայթեալն:

Ճառաւիղեալն շարժեաց զանիւ ժամանակին, այլ այնքան արագ, որքան և լեզուք Տիկնաց զանուն Օ ուրանաց բերանոց ՚ի բերանս վոխէին, շտացից թէ և զանձն նորս սրտից ՚ի սիրոըզճակերտ: — Այլ էանց: Եկաց Երկրատես, և ահա մեծամեծ աւագանի դրաննե, արքունի բղեաշխք, և կուսակալք ամենայն, քուրմք և քրմապետնոց, բազմութեամբ գեսպանաց այլ և այլ ազգաց և թագաւորութեանց, խմբեցան ՚ի տես արքունի և հանդիսին հանդելձելոյ, զորմէ ոչ ոք զի-

տէր ինչ : — Հայկանդուխու զակումբը  
բազմականին տեսանելուլ , և ՚ի միջոյ  
նցա զտեղի Օուրանայ զուր ՚նշնա-  
րելուլ , մնացաւ ՚ի մատոււն առանձին .  
և ծռնը իջեալ առաջի Անահտական  
գից բազնի՝ և ասսց . մոյր և կենդա-  
նութիւն Հայոց աշխարհի , — Կայս  
դժիայ երկնից , ողորմեա ինձ . և օրհ-  
նեա զօրս զայս բարի վախճանաւ : Յա-  
բուցեալ ապա՝ դալկահար մնաւ ՚ի սրահ  
սոսկալի , յորում հանց յերեկի , խոս-  
տացեալ էր Օուրանայ սէր իւր , և  
Օուրան՝ զկեանս իւր : Լանց Երե-  
րատես , և զեռ չէհաս սիրելին :

Կառաւիզեաց Կանթակող , և զօրք  
արքունի ամենայն կահու և կարասու  
պատերազմի եկին շուրջ պատեցան զա-  
պարանօքն արքունի : Քանիարծակի  
էջ րութիւն և հանդեաւ ՚ի վերայ  
բազմականին , պատանիք ընդհատին ըզ-  
ճառ սիրահարութեան իւրեանց , և կա-  
նայք զբամբասանս , դատաւորք դուլ  
ետուն անցիցն ատենի , և քաղաքա-  
կանքն զաշալքութեամբք իւրեանց ,  
յարձան աղի փոխադրեալ ապուշալ առ

միմեանս հայէին . այնինչ ահեղափառ  
մեծութեամբ սիգաճեմարփիացաւ Ար-  
քայ ՚ի մէջ բազմականին , և ասէ :

Ո՞ւ խռովեսցին սիրտք ձեր , բարե-  
կամք . յաղագս նախազգուշութեան այ-  
սորիկ՝ որ շունի մասն ընդ խրախճա-  
նութեան մերում : Ամենեքեան դուք  
լուեալ իմլէք զանզգամէն Արեղինեայ ,  
որ սպան զՃէր Աիւնեաց , և զիեսայտա-  
ցեալն քեռա՛ կորոյս զԱսենակ , զՄո-  
րէն խորխովունի , և զՄարդպետան  
Վարդպետ : Օ ամենայն այլ առաքի-  
նի յԱրմաւիր հակառակ ինքեան զնէ ,  
որ ինչ սուրբ և պատկառելի՝ խաղալե-  
կըք են անօրինին . և զինչ . եթէ յուրա-  
խութեան մերում յանկարծակի ՚ի ներ-  
քըս մասնիցէ : Անեւեւան . Ո՞վ , Արեղէն .  
խօլական այն : Առեւ . Վացէ այսրէն  
յիւրո՞ց կամաց : Երբեմն . Ո՞չ . — այլ  
Օ ուրան Աղուան յանձն էառ միա-  
մտութեամբ ծառայել մեզ , և ունիլ  
զնա թէ կենդանի՝ թէ մեռեալ : Եանց  
Շանթակող : Ա . Խոր . Դժուարին յիսի  
նմա կատարել զայդ յանձնառութիւն .  
երանի թէ պահեսցէ նա զիսաստումն իւր :

բ . Խոյ . Աայց թէ կատարեսցէ . յայն-  
ժամ աշխարհ մեր Ճաշիցի ընդ կըր-  
կին թագաւորօք , Գ . Խոյ . Ամենեքին  
պարտիմք տանել զայդ ծանրութիւն .  
տես ո՞րքան մեծ սպաս հարկանիցէ նա  
Հայրենեաց մերոց : Օ այդ յիս թողէք  
ասէ Արքայ . Օ ուրան Խնդրեաց ըզ-  
Հայկանդուխտ ի կնութիւն եթէ կա-  
տարեսցէ զխոստումն իւր , նա վարձ մե-  
ծադին է նորա : Խանց Երկրաանս :

Հրակաթ յաջորդէր հոլովել ըզ-  
վայրկեան ցնծութեան նոցա . զի ամե-  
նայն ցնծութիւնք աշխարհի վայրկե-  
նականք են : Այնէ ամենեքեան յա-  
պուշ կրթեալք ընդ բանս բերանոյ թա-  
գաւորին , կէսք լուռ և եթ մնային ,  
կէսք նախանձու բեկանեին , յայժամ  
հծծելով Պարիսայ յականջս Ատրակայ  
ասէ . ուր իրքս եզերիցն : Ատրակ ժը-  
պիտ արհամարհութեան զերեսօք ա-  
ճեալ ասէ . դիւրին չէ զԱբեղէն ունիլ :  
Դուք . Խշանք , ասացէք եթէ ուրուք  
դէմ յանդիման տեսեալ իցէ զԱբեղէն :  
Բաշանք . Ես ոչ , ես ոչ բնաւ : Հայկանդ  
Աի անդամ տեսի զնա , Պարողետանի :

ոչ երբէք մոռացայց . Հրէշ էր Հրէշ :  
Երբունի . ՈՄ իանգամ և ես հանդիպե-  
ցայ նմա , որպէս քաջ զիտէք : Առաջ .  
Քաղում ինչ լուսյ զննանէ , մին քան  
զմին զարհուրելի : — Ես յիսոյսոկող-  
մանէ այնպէս վարկանիմ , թէ սանդա-  
րամբտական ոգի ինչ իցէ նա՝ երեեալ ՚ի  
կերպարանս մարդկան , և խորհուրդ տամ  
մի մուժանել զնա այսրէն ՚ի ներքս . զի՞  
մի զամբնեսեան խեղղիցէ :

Արամազդ ո՛թա մեզ , աղաղտկեաց կա-  
նանին . մի տսեր , մի տսեր , ուղորդ  
խեղղիցէ զմեզ զամբնեսեան յայտմվայ-  
րի : Գուր . Քան այն է՝ զի զիտասցուք ,  
նա . Օ ուրանայ յաղթիցէ , թէ Օ ու-  
րան նմին . ահա ՚ի գրաւ դամ , զի ձեռն-  
տնայն յետս գարձցի Աղուանն : Ա . Իսր .  
Եւ ես ՚ի գրաւ դամ , զի ընդ հակառակն  
եղիցի . վանեղի՝ եթէ իցէ ոք յԱրմա-  
ւիր , որ կարիցէ զգէմ ունիլ Աբեղի-  
նի . Օ յուրան է : Բ . Խոր . Եւ ես ընդ  
քեղ եմ , ոչ երբէք սպառահեցայ պա-  
տանւոյ քաջի և սրաէի՝ որպիսի . Օ ու-  
րանն երեի ՚ի միջի մերում : Գուր . Հա-  
զմոր կշիռ տակւոյ , թէ Աբեղին նուա-

Ճեսցէ : Ա . Խոր . Ե՛ւ Հազար կշիռ ոսկ-  
ոյ թէ Աբեղէն ոչ նուածիցն : Եւստան-  
Ե՛ւ ոչ մատնեսցէ ՚ի ձեռա իմ : Թէ լին-  
դանի՝ թէ մեռեալ : Գունք . Ա' եծափառ  
իշխանք . Վկայ յելուք զրաւոյս : Բ . Խոր .  
Ե՛ւ իմ մասն ՚ի միջի կայ գորա . Հազար  
կշիռ ևս : Ա . Խոր . Եշղե : Գորիս ծի-  
ծաղելով իմն , բազում շնորհակալու-  
օթիւն քեզ , Տէր . վասն Հազար կշիռ ոսկ-  
ոյ քում , զոր արդէն իսկ ՚ի քսակիս Հա-  
մարիմ : Օ ուրան իշխան հանձարեղէ .  
ընդ այդ բան չունիմ , բայց ՚ի սլայքար  
Աբեղինի մասնել՝ շատ է նմա : Եշանց  
հրակաթն :

Հուրիմայլեալն հոլովէր յայնժամ  
զանիւ կառաց ժամանակին , յորժամ  
քրիմապետն Աբշէր հարցանէր ցԱբքայ ,  
եթէ Ոտոանն դունդ չուեալ իցէ ընդ  
Օ ուրանայ : Աչ ասէ Աբքայն . այլ  
նա միայն ել նահատակ ախոյենին , և  
զԱռազօտ պահ Հաստատեաց դրբաճի իւ-  
րում : Քայնժամ զերես դարձուցեալ  
քրիմապետին առ Գորիս կադմեայ՝ ասէ .  
ուրախակից եմքո : վասն շահելոյ քեզ  
զհազար կշիռս ոսկւոյ : Գունք . Արովհե-

տեւ սրբութիւն քո գուշակէ ինձ զայդ՝  
այլ ոչ ևս երկուանամ։ Եանց Հուր-  
փացւեալ։

Ուաղանթեալն տեղակալեաց, և Շա-  
ւենակ Աղճնեաց Բնդեաշխ ասէ ցԱր-  
շէր, արդ սկսայ ոզի առնուլ, մինչեւ  
տեսցուք զկատարածն։ Խսկ Հայկան-  
գուխտ յիշելով զժամն, յորում յե-  
րեկի ուխտեաց Օուրան զկեանս իւր  
զոհ ինքեան, թառամեցն, թարշամե-  
ցաւ, լքաւ յամենայն զօրութենէ, և ոչ  
կամէր միսիթարիլ։ Առին զնա կանա-  
նին, և տարան ՚ի սենեակ ինչ, սկսան  
խօսիլ ընդ ՚նմա բանիւք բաղմօք,  
զէթ միսիթարել կարասցեն զսիրայրեաց  
սիրտ ՚նորուն։ Խտօսեցան, փրփրեցան,  
այլ ՚նա ոչ սփոփեցաւ ։ Եանց Ուաղան-  
թեալն, և Օուրան գեռ ոչ դարձաւ։

Գ Լ Ո Ւ Խ ։ Բ ։

Ա Թ Ա Վ Օ Տ ։

Հատաւ հանգստութիւն Արքայի։ Ա-  
ռաջին Խորհրդականն Արտաւան ցա-  
մէր ընդ հաղար կշիռս ոսկոյ, և զա-  
հերէցք ապստամբից ոչ զսպէին զժաղը

արհամարհանաց իւրեանց : Պարիս Արդ-  
մեայ լըջութեամբ քարողէր , թէ ուրա-  
խութեամբ կորուսանէի ոչ զմի , այլ  
քան հազար կշիռս ոսկւոյ , եթէ կո-  
րուսպի իմ ՚ի նուաճումն Արեղինին օ-  
գուտ ինչ առնէր տէրութեան Հայոց :

Յուշ , պահն զոչէ Առազօտ . ամե-  
նեքին ունկն զնէին , և Հայկանդուխտ  
նուազեալ զարկուցեալ էր զգեսնին ե-  
թէ չէր Կողինայ պինդ կալեալ զնաւ .  
Պահն պայմանեալ էանց , և Օ ու-  
րան չէր ՚ի միջի :

Եկն Արփող , և այնինչ ՚ի մոխցն կու-  
սէ Արե նշողէր ընդ պատառուած ամ-  
սոց զիւր վերջին նշոյլ յերես լուսե-  
ղինին Հայկանդխտոյ , յարեաւ դժխոյն  
՚ի գահոյից , և ամբարձեալ զձեռս իւր  
առ Պառնդն համապայծառ՝ աղաղակեաց  
սրտի մաօք , և ասէ , Աստուած կեն-  
դանի ողսրմեա ինձ , մի տար ինձ ՚ի  
կուսութեան միւսանդամ այրինիլ : —  
Արտասուքն յորդայորդ ծովացեալ ի-  
ջին ընդ ծնօսոս նորա , թուլացեալ ծըն-  
կօք յառաջէր առ եղբայր իւր , այլ  
կարկամեալ հեկեկանօք , ոչ կարաց խօ-

սիլ։ Հայթայթել գեթ ծածկել զամբ-  
բոխումն պկրից իւրոց, այլ չեղե հեար.  
անելու կիսաշունչ, և կրկին աղօթս ե-  
կաց առ Լշակին Գերազոյն։

ՅայնժամՊարիս Աագմեայ զլոռոթիւն  
բազմականին բեկանելով ասաց . Առա-  
զօտն չըր ժամ պայմանեալ դարձին .  
Օ ուրանայ, և ահա Արփողն էանց,  
և ուր իցէ Արեղէն : Ա . Խոր . Թ ող բեր  
րիցէ զԱրեղէն, և եկեսցէ երբ կամք ի-  
ցեն իւր, Եւրոպ . Լուր, լուր, — չէ :  
— Լուր, լուր, ահա ոտնաժայն ի սը-  
րահին : Այնինչ վեռ բանք ի բերան  
Արքայի, վեղք դրանդեացն դղիրդն ա-  
ռեալ բացան, և Օ ուրան ի ներքս  
եմուտ սփածեալ զարկանելին : Հերք  
գլխոյ Նորա լուղային ընդ օդս անփոյթ  
իմն ծածանմամբ, խորին կեծիուք ե-  
րեսաց Նորա զանուր իմն գուշակէին  
պատահար անկարծելի, խոնարհեալ ցը-  
ցունք ճաղաւարտին շիթս անձրեաց կա-  
թեցուցանէին տակաւին : Տիրութիւն  
ինչ համատարած զիրանաւն պարապա-  
տէր գլխովին, շուրջ հայեցաւ սրսմը-  
տութեամբ, որպէս թէ ողջունել ինչ

կամիցէ բազմականին : Արոց այլը իւրաքանչիւր զրոհեցաւ զնովաւ , ամենայն բերան բացաւ հարցանել ինչ ցնա , աչք ամենայն 'ի զեին կացին , փոյթեռանդունք զունքի զուշակեյ զպատասխանիանորա :

Ամենազօր Պաք , աղաղակեաց Ատրակ .  
Երկնչիմ մի զուցէ թէ — Առեաց իշխան ,  
կրկնեաց Պարխ , զինչ առիթ երկիւզի  
կայցէ քեզ կամ ինձ ասու :

Յայնժամ պարզեալ Օ ուրանայ զձեռն .  
իւր յատեան ասէ . Խշխանք Արմառայ .  
թուի թէ Արքայի յայտնեալ իցէ ձեզ զզիտումն համախմբութեան ձերոյ , զամ աւասիկ վախճան տալ ամենայն երկուանեաց ձերոց , բայց նախքան ասնել ինչ յաջողակ կամ ձախողակ միսանգամ ազերսեմ լսել իքէն Քաջ արանց , զհաստատութիւն ուխտին , եթէ մատուցից ձեզ զԱրեղէն սրիկայ , սմբ իցեմ Հայկանդխտոյ թէ ոչ : Երանետ .  
Օ ուրան յաջողեցան քեզ զէպէն , կալմը զԱրեղէն , թէ ոչ : Զարու . Թէ Արեղէն կալանառը , Հայկանդուխտ իմ եղիցի : Երանետ . Տուր ցիս զնակենդանի կամ մեռեալ , և Հայկանդուխտ

քոյ է կի՞ն : Զուրու . | ուռոյք իշխանք  
 Արմաւրաց . ՚ի վկայս եղերուք ինձ : Առե-  
 ժին : ՚Վկայ եմք : Զուրու . Արեգէն կա-  
 լանպաւոր իմ է — և ձեր . ամեներեան  
 խոսվեալ աղաղակ քարձին և պան :  
 մեր , — Տէր Աստուած — և ուր իցէ  
 նա : Երանուր . Արեգէն : Ուեսեալ իցէ .  
 թէ կենդանի : Զուրու . Աենդանի է դեռ :  
 Արւէր . ՚Դեռ կենդանի : ՚Օ ուրան ակէ-  
 նածութեամբ զլուխ խոնարհեալ երա-  
 նեալ քրմազլետին՝ ասէ , այս Տէր . աս-  
 կաւին կենդանի է :

Հայկանոպուխտ սեղմելով՝ զաջ Շո-  
 ղինայ ՚ի ձեւին , տես , տես ասէ . զի  
 ամբարիշտն զեռ կենդանի է , և ոչ իսկ  
 շեթ արեան նորա բժաւորեաց զանմե-  
 թիւն սիրազին :

Ա . Խորհրդականնե Արտաւան ծափ  
 զծափի հարկանելով ասէ ցՊարիս . տա-  
 րայ հազար կշխոս ոսկոյ : Գուշ . Շնե-  
 րես Նյզպէս թուխի քեզ : Եւ . Ար-  
 դեակ , պարտապան կացոց ցեր քեզ զԱշ-  
 խարհս Հայոց մինչ ՚ի սպառ , և խնդամ .  
 զի ՚Օ ուրան է . որում պարտապան զը-  
 տանիցի նա ընդ այսպիսի երախտեօք :

Ա . Խոր . Թխոյլ տաւը ինձ Ախպօւհդ Աղ-  
 ուանից , մատուցանել քեզ զշկորհակա-  
 լութիւն Ատենակալացն Արմաւրպյ .  
 վասն գիւցազնական գործոցս այսոցիկ .  
 առաջին հոդ մեր լիցին գտանել քեզ ովր-  
 սակ արժանի այսպիսի արգեանց : Զարդա-  
 Շգեալ զձեան իւր գէպ առ Հայկան-  
 դուխտ , ասէ . աւանիկ մի միայն վարձ  
 իմ : Եւ . Այս քո է այն վարձ , քո .  
 բայց ուր իցէ արիւնախանձ Ակիթխա-  
 րին , բեր զնա այսրէն , որդեակ . զի  
 միւսանզամ հայեցայց ՚ի նա : Որ յա-  
 ռաջնում նուազի տեսութեան համար-  
 ձակիցաւ ասել , Արքոյ , հաւասար քո  
 եմ . այս փոքրիկ սենեակ պարունակէ  
 զիւրկու մեծ Արարտ յԱրմաւիր , Արտ  
 բեր զնա սեսից զինչ հաւասարն եմ առ-  
 նիցէ ՚ի կալանս իւր : Բ . ւ Գ . Խոր . Ուր  
 իցէ , բեր . բեր զնա : Բազմութիւն ՚ի  
 կանանւոյն լուեալ զայս՝ ՚իչ բարձին .  
 ՚ի սէր Անահտայ , մերժեցէք զիւազդ  
 առ ՚ի մէնջ . ո՞հ զառզանգ , զահի հար-  
 ցուք ՚ի նմանէ : Զար . Խշանուհիք  
 Հայոց մեծաց , բարձոյց առ նոսա Օու-  
 բան օտար իմն ժպանօք , որ յաւետ

զոխրութիւն քան զուրախութիւն զու-  
 շեկէին . մի երկնչեք ամենեին , Արե-  
 ղէն չար ումեք ոչ արասցէ , այլ ե-  
 կեսցէ աստ պահանջել զիւր Աիրահար  
 Արիկայի . մատամբացի ցուցանելով ըգ-  
 չայկանդուխտ : Հայանութ . Աիրազնւնու-  
 իս , զոհանամ զքէն՝ զի այսպէս կալար  
 դու զկաւառ զարհուրանաց . այլ ևս  
 ոչ գողացայց 'ի լսեին զԱրեղէն . այլ  
 և ոչ անուանեցայց սրիկայի սիրահար :  
 Շահեն . Խցի աստ Արեղէն յասլարան-  
 ուն Արքայի : Զաւուն . Խ՛ : Ա ; Խոր . Եւ-  
 լնդէր ապա ոչ մատուցանիցես զիա յա-  
 տեան , ընդէր խաղ առնիցես զմերով  
 անհամբերութեամբ : Զաւուն . Համբէր  
 Արտաւան , դեռ խաղ նորոգ սկսանի . —  
 բազմեաց Արքայդ մեծ , նատարուք իշ-  
 խանք , զի ահա դայ Արեղէն : Բ նու-  
 անուն Արեղինի ամենեքին սոսկացան ,  
 ծերք և աղայք , արք և կանայք գը-  
 նացին և մոխին , կացին ընդ հովանեաւ  
 Արքայի , արտիեալ սրտիւք և զահի-  
 հար երեսօք : Խակ գահերէցք ապրս-  
 տամբից կորացան ընդ ակնկալեալ ե-  
 րեումն Արեղինի , և յոգիս խրեանց

կրէին զխայթոց տառապանաց գժոխոց :

Օ անրահայեաց և շուրջ օբաղմեցաւ  
Երուանդ՝ որպէս դատաւոր, որ ըլզ-  
վձիո հատանիցէ ՚ի վերայ սալարիս սր-  
բիկացից, Երախան բազմականին զնին  
կացին դաս առ դաս, ամենեւին լուռ և  
տխուր հայէին ՚ի կատարած դատաս-  
տանին, Գեղեցիկն Հայկանդուխու,  
մրոյ անմեղութիւն պատճառ երկիւղի  
չունէր, գերբնական իմն անդորրու-  
թեամբ զկլուխ յուան յեցուցեալ Շո-  
ղենայ՝ անթարթ աչօք ակնարկէր առ  
սիրահար հսկայ իւր, Ապասամքն դալ-  
կահար դիմօք, և պշուցեալ աչօք յե-  
տը յետա կրնկէին, Եւ մեռօրինակ  
դադարումն ահեղաղին լոռութեան՝ զայր  
հանգչէր ՚ի վերայ ամենեցուն :

Յայնժամքարողեաց առ նոսա Օ ու-  
րան ՚ի ձայն բարձր և ասէ, պատրանտք  
եղերուք, զի ահա զայ Աբեղէն, հը-  
զօրն և զարհուրելի : — Օ այս ասա-  
ցեալ եւ ընդ մէջ փեղկից գրանն, ըզ-  
կայ էառ անդանօր, պատասեաց զե-  
րեսն արկանելեաւ իւրով, և ձզեալ  
զձեսն իւր դեպ արտաքս՝ զոշեաց Ա-

բեղէն, Արեղէն, Դողումն կալաւ  
զամենեսին յանուանէ տատի, և այն-  
ինչ Հայկանդուխտնազաքայլ առ սի-  
րելին յառաջէր, միւսանդամ թնդաց  
Օռւրան ի ձայն մեծ, և երեեցաւ ա-  
ռաջի նորա նոյն իսկ ինքն Արեղէն:  
Կ' Օռւրան, կ' ասէր գժիոյն մինչ  
ահա սալարն սրիկայից երեեալ փո-  
խանակ նորա՝ կայթիւն եհար և որո-  
տաց զինչ զինչ:

## Գ Ե Ռ Խ Խ ։ Զ ։

Ա Թ Ա Զ Օ Ք Ց Ն Ո Ր Ք :

Աղաղակք երկիրւղի և զարհուրանաց  
արձագանդեցան ընդ ապարանս արքու-  
նեաց. Հայկանդուխտ մեռօրինակ և  
դի տապաստ անկանէր ընդ ոտիւք սր-  
րիկային, զահերիցունք ասլստամբից  
հեղձնուին զողջիր զայրացմամբ, զար-  
մացմամբ, և սքանչելեօք: Պառաւունք  
ի պանատանս, և հարսունք յուռու-  
թուլունս յուսային: Ատենակալք և  
խորհրդականք Արքայի յարձան քարի  
կրթեցան, և Արքայ յերկուանս եկաց,  
թէ աչացն հաւատայցէ արդեօք: Եթէ

ականջաց իւրոց :

Կապաղ և անխռով կայր առաջի խօ-  
լքիան արևոյթն , կատարեալ ահեղու-  
թեամբ օտար և զարհուրագին տղե-  
ղութեան գիմաց իւրոց : Տարազ ըդ-  
դեստուցն զլխովին սրիկայի , կամար  
միջացն լի մահաբեր գործեօք , դաշ-  
նակօք : Վաղակաւորօք , սուսերօք և  
երկայրիւք : Դէմք գալկահար , կըն-  
ձու ՚ի կնճիռն գալարեալք , և ծամածուռ .  
յժնք մացառուս և արջնապթոյրք՝ հա-  
րուստ իմն արտաքս ցցուեալք՝ զակն  
աջոյ նորա ընդ պիսակաւ մեծաւ ծած-  
կեն ( զի կոյր երեւէր . ) և ձախոյ ակն  
նորա ՚ի խոր խրեն ընդ խորշոմն մը-  
սոցն պայտելոց շուրջ զնովաւ . ունչք  
տափարակք , շրթունքն հաստ և ՚ի վայր  
ցուկացեալք , գիտակն այրանդակ , և  
երեսյթն անհռելի , արձանացաւ անդա-  
նօր ՚ի պակացումն ամենեցուն . և հուսկ  
ուրեմն յառաջ տուեալ առ Արքայք թըն-  
դաց ՚ի ձայն ահեղորոտիան : Հա—  
Արքայդ Հայոց մեծաց , կամեցար զԱ-  
քեղէն զարիկայն տեսանել , ահաւասիկ  
կայ առաջի և պահանջէ զիւր սիրահար :

ՅանկՃիւտ եղեալ Արքայի հոյեր զար-  
 մացմամբ քնիդ այս նախազաղափար գի-  
 ւաց, Մինչ ՚ի վերջոյ հազիւ թէ պապա-  
 ջել կարաց : Չէ, չէ, իրական իմն չէ  
 այդ, առաջօք ցնորք իմն է՝ կամզըսանք  
 երազոց, Պառլու կորիր Ճիւաղ, — Պահնք  
 աղաղակեաց Արշէր քրմապետ, և փո-  
 թայր ՚ի պատուհանն հասանել, այլ Ա-  
 րեղէն յեցեալ թիկն ՚ի նոսա, մերկեաց  
 զսուրն երկսայրի, նշանեաց ՚ի կուրծ նո-  
 րա՝ և ասաց, որ ժպոհիցի ձայն տալ  
 պահաց, կամ քայլ մի յտուած խաղալ  
 ՚ի տեղւոցէն, յանկարծամահ սառա-  
 կեացի : Հիմնք, համարիցիք թէ անձ-  
 նատուր եղեալ յայս զառագիոլ անկա-  
 նէի, եթէ կասկած ինչ կրէի զղինուց  
 նոցա, կամ յոյս ՚ի փախստենէ : Ոչ  
 կալանաւորիմ ձեզ՝ բայց ոչ ՚ի հարկէ,  
 կամք էր ինձ կալանաւորիլ ձեզ, վասն-  
 որոյ և եկի իսկ : Չիք արարած, որ  
 պարծիցէ ունիլ զԱրեղէն, եթէ ար-  
 դարութիւն վճռիցէ նմա մասնիլ, ինք-  
 նին մասնի ՚ի ձեռո ձեր : մի համարի-  
 ջեք, եթէ Արեղէն ՚ի հասարակ սրի-  
 կայից ոք լցէ, որ միշտ խոյս տուեալ

՚ զօրաց ձերոց , սպանանիցէ , զմարդիկ  
յուսով անիրաւ յափշտակութեանց :  
Ոչ երկինք վկայեն ինձ , զի Աբեղէն  
չիք այսպիսի հասարակաց չարագործ :  
Աբդարե սրիկայ էի , այլ մեծ և երեելի  
իմն դիտաւորութեամբ : Եւ . **Տէր Աստ-**  
**տած , հնարաւորք ինչ իցեն այս դեպք :**

**Դ**արձեալ լռութիւն ահեղ տարա-  
ծեցաւ անդանօր , ամենեքին զահի հա-  
րան ՚ի լուր ճայնի արիւնախանձ **Ա**իթ-  
իսմարտոյն , որ զգնայր ՚ի սրահին սիդա-  
շեմամպարտաւանութեամբ՝ որպէսմի-  
ահեծան ստորնոց : **Հ**այկանգոււխտ զա-  
ռաջինն բացեալ զաշս իւր , և տեսեալ  
զսոսկալին աղաղակեաց , ողորմած **Ա**ստ-  
տած . զեռ մաստէ . թուէր թէ և **Օ** ու-  
րան և ո — ոչ . ոչ , կարեոր չիք : —  
ապա հմայիւք խարեցայ :

**Ա**բեղէն յառաջ զնաց յարուցանել  
զնա , իսկ նա խորշեցաւ ՚ի նմանէ ա-  
հաղին չչիւք : **Ո**չ այդպէս Հայկան-  
դուխտ , ասէ ցնա սրիկայն ամոք իմն  
բառբառով , սիրելին քոյ **Օ** ուան ոչ  
է այլ ոք քան զ**Ա**բեղէն **Աբեղայ :**

**Ա**յսուասես , չչաց Հայկանգոււխտ :

և յարուցեալ վհատութեամբ անկառ  
 ի գիրկ Ծողենայ իբրեւ յանքոյթ յա-  
 պահովի ցնորք , իւ Օուրանն իցես  
 դու , մարմթ ինչ իցէ քո ափս հրեշի , դու  
 այնպիսի հրեշտակ : Օուրանայ զործք  
 բարիք էին և փառացիք քան կիսադից  
 Հայկազանց , նովաւ ուսայ ես զբարին  
 և փառացին , նովաւ խրախոյս բարձի  
 առ լաւն և գերազոյն : Աիրա նորա ա-  
 զատ ՚ի կրից կամակորաց՝ միշտ մեծա-  
 մեծս խորհեր և սքանչելիս : Ոչ ե՞ր-  
 բէք խիթացաւ յահճն առնուլ ճգունս  
 ՚ի վերայ Ճանապարհին առաքինութեան,  
 և ամենայն վշտաց աարաւ՝ ՚ի սրբութիւն  
 անմեղ արտասուաց բազմաց : Այսոքի էին  
 յաղթանակք պարժանաց նորա : Օու-  
 րան և գու թշուռական , — երկինք գե-  
 տինք զանազան : Վանի արինաթա-  
 թաւ ողիք անկելոց ոչ բաղոք բարձին  
 զքէն յատեան Աստուածոց , և գու քե-  
 ապակմնիցես զանուն Օուրանայ :

Խակ Աբեղէն յանդուդին կաթովնու-  
 թեամբ , թողուցմաս զիս Հայկանուիս  
 մոռանայցն զլսուսաւմն քոյ : Հայեաց  
 և տես , — ես սրիկայն Աբեղէն , եմ

Քո սիրելին Օ ուրան : Օ այս ասացեալ մերկեաց առ զդիմակն յերեսաց ,  
 ջնջեաց զայն թաշկինակաւ , և ահա փոխադրեցաւ ցնորքն ուրուական , և եկաց բուաջի բազմականին Օ ուրան ի զգեստս Արեղինի՝ և ասաց , լուր ինձ Հայկանդուխտ , եօթնիցո կրկին և կըրկին , և եօթնիցո վերստին փոխեցից զկերպարանս իմ առաջի քո , բայց այնպիսի արագ արագ ձեռնաժութեամբ . .  
 մինչ խարիցէ զակն Արեկու 'ի զնին :  
 Փոփոխեցայց յոր կերպարան և կամքեցն , այլ ՚ի սիրոյ քոյ անփոփոխ կամք և մնամք . ես նոյն եմ , զոր սիրեցելու Օ ուրան :

Արքայ յապուշ և եթ Հայէր , երբեմնապէս մրմնջելով , զարհուրելի զարհուրելի : Արեղին հուպ մատուցեալ առ Հայկանդուխտ , բեկանիցես ինձ ասէ , զիսսատումնոր քո , ոչ իցեմ արդ քո սիրելին Հայկանդուխտ :

Աչ կարաց պատասխանել նմա կոյսն ,  
 արձանացեալ կոյր , և պշնոյր առ սրիկայն : Արեղին կալաւ զաջոյ նորա և համբուրեաց , տակաւին դու իմ իցես

Հայկանդրւիստ : Հայէնու . Օ ուրանի ,  
երանի թէ չէի բնաւ տեսեալ զքեղ ,  
և — ԱԲԷՆ . | ինիցիս արդ զարդ Օ ու-  
րանաց , լինիցիս սէր սհար սրիկայի :

Աստանօր սէր սաղիսեցաւ ընդ զըդ-  
ուանեաց 'ի սիրտ Օրիորդին Հայկա-  
զունեաց , և ցաւագին եղեւ կռիւ կրիցն  
արդարեւ : ԱԲԷՆԻ . | ուր ինձ գեղեցիկու  
իմ , վասն քո յայտնեցի զգաղտնիս սըր-  
տի իմոյ . վասն քո մատնեցի զանձն  
ատենիս արդարութեան , և վասն քո ,  
ով . զինչ արարից . իսկ արդ մնամը լը-  
սել 'ի քէն զայն կամ ոչ . և 'ի դմբն վճա-  
րել զամենայն միանդամայն : Աիրիցես  
զիս տակաւին Հայկանդուիստ :

Աչ պատասխանեաց , այլ արկ ՚ի նա-  
հայեցուած ինն անմեղ և զողորական՝  
քան զոր աստուածքն հաճք 'ի պատա-  
րագս մահկանացուաց՝ նշողեցին յա-  
չաց իւիեանց : Եւ նովին յայտ արար  
թէ անզգամն իցէ տէր գրկանաց իւրոց .  
Դարձաւ 'ի նմանէ , անկաւ ՚ի դիրկս  
Շողենայ և հառաչեաց , աստուածքն  
ներեսցին քեզ մարդ , վասն այսքան չա-  
րաչար խոցոտելոյ քոյ զիմսիրտ :

**Արքայի հազիւ յանձնէ ՚ի. բաց թօ-**  
**թափէր զդիմակ յիմարութեան, յառ-**  
**նէր ՚ի գահոյից իւրոց, սպառնալիս փայ-**  
**լառակէին հրացայտ աչքն, և շրժունք**  
**դողդողէին սրտմտութեամբք և ցաս-**  
**մամբք :** Քարձակէր ՚ի վերայ **Արե-**  
**ղինի բուռն զօրութեամբ :** այլ խորհր-  
**դականացն խտիր անկեալ ՚ի միջի՝ խո-**  
**չընդակն լինէին :** Խսկ սրիկայն յա-  
**ռաջ մատչէր առ նա անխռով խառ-**  
**նքւածով . և խրոխտ խեռութեամբ :**  
**Արքայի Հայոց հանդարտ կայ . պահի-**  
**ցես զխոստումն քոյ , թէ ոչ վկայք են**  
**ինձ ականաւոր իշխանք քոյ : Եւ . Խօլ,**  
**անզրամ, — ով որպիսի խորամանկու-**  
**թեամբ եղաւ ինձ որոգայթն : — Ա-**  
**սացէք իշխանք Հայոց , պարտ ինչ իցէ**  
**տաւ զպարտն այսպիսի պարտատեառն**  
**որ ՚ի վաղուց հայրացաւ չարեաց իւրոց .**  
**անկան հզօրք սրով դորա , և զօրա-**  
**ւորք նիզակաւ : Ասպէնիւք արիշան նո-**  
**ցա ազնուական երևեցաւ , առ իս սոզաց**  
**կեղծաւորաբար իբրև իշխան **Ազուա-****  
**նից , գողացաւ զսիրտ Հայկանդիսոյ**  
**սիրայնոյ , և դիւթեաց զհաւանութիւն**

իմ առ այն, Խոկ արդ՝ ժպրհի վերստին պաղատել զնա առ ՚ի ծածկոյթ չարեաց իւրոց, և ՚ի փախուստ յիրաւանց: Արդ՝ ասացէք իշխանք Հայոց, արժան իցէ պահել Արքայի զբան իւր ընդ անօրէն չարագործիս այսորիկ: Ամենայն խորհրդականք միաբերան ասացին. ոչ, ոչ, ոչ բնաւ: Խոկ Արեղին ահեղաբար, եթէ միանգամ խոստացաց՝ պահեաւ, թէպէտե իշխանին խաւարի խոստացեալ իցես: Ա այ քեզ Արեղին, զիարդ ամօթապարտ խաբեցար ՚ի քում համարման: Խոռուէր ինձ թէ ընդ արանց պատուաւորաց խօսէի, բայց արդ հիբար սղալեցայ: ( ՚ի ճայն զարհուրագին, ) միանգամ ևս, և վերջին. հարցանեմ քեզ Արքայ Հայոց, Պարմեա խոտի քում:

Հայնժամ Արքայ տիրաբար հրամայեաց, թէ մերկացիր ՚ի զինուց քոց: ԱՌԵՆ. Եւ դու տաս ինձ զիմ զոհար, թէ ՚ի զուր աշխատեցայ ածել այսր զԱրեղին: Եւ Վաղին Օ ուրանայ, խոստացայ զՀայկանդուխտ, և ոչ սրիկային Արեղինի: Թող եկեսցէ Օ ուրան և

ընկալցի , այլ Արեղէն ոչ բնաւ : Գիշը  
՚ի բաց զղինսդ ասեմ :

Արեղէն ծիծաղեցաւ շնտ . զԱրեղէն  
սրիկայ ասես , ոյ , հայ . զդոյշ լեր  
պահել զոր խոստացար , և մի աշխատ  
լիներ ՚ի վերայ ոսլանութեանց իմոց :  
Այնք՝ զործք են իմ , և կարացից հա-  
մարս տալ զնոցանէ , երբ գիքն ՚ի դա-  
տաստան եկեցին :

Արշերի դարձեալ առ Արքայ՝ ասէ .  
զի՞նչ այս մեծ հայհոյութիւն : Խսկ Ա-  
րեղէն արհամարհութեամբ ակնարկեալ  
առ նա՝ ասէ , Հոգեւոր տէր Քրիմա-  
պետ . միջնորդ լեր մեղաւորիս , զոր քաջ  
ճանաչես գոլ նահատակ պատուոյ և  
փառաց , ոչ ուրանաս թէ զիարդ միա-  
մտութեամբ ծառայեցի քեզ՝ Հայոց  
Հայրապետ , բարեխօսեալ վասն իմ :

Յասեաւ Արշէր սրտմտութեամբ բար-  
կութեան , և Արքայական իմն վեհափա-  
ռութեամբ դարձոյց առնա և այսէ , ոյ  
չար անառակ . մի խօսեր ընդիս . զի՞նչ  
կայր քո ինձ հարկանելոյ զպաշտօն ծա-  
ռայութեան : Տէր Արքայ , մի յա-  
պաղեր հրայմայել այսրէն զվաշա մր-

քունի սրահաց : Աբել . **Օ ինչ :** — իմ  
յոյս գլխովին հասան , — չիք որ ո-  
ղոքմիցի Արեղինի թշուառի : Արդա-  
րև չիք ոք , — չիք ոք . ամենեքեան  
լուցան , բաւականէ : Ճակատագիր իմ  
լցաւ . կոչեցէք արդ զգունդն :

**Հ**այկանկուխտձիչ բարձեալ ՚ի տագ-  
նապին անկանի յոսա Արքայի , և զո-  
չէ ողորմութիւն , ողորմութիւն . թող  
նմա , ոչ ներեա Արեղինի : Արեղին իսե-  
լազարեալ ՚ի սիրոյն՝ ասէ . արդարե նե-  
րել ասես կըյս , ուրեմն հրեշտակէ բա-  
րեխօս յօրհասին Արեղինի : **Հ**այկան-  
կուխտ զրկեալ զգունկս Արքայի , ա-  
ղերսեաց ողորմեան նմա եղբայր իմ և  
հայր , մեղաւոր է՝ թող նմա արդարու-  
թեան դից . յանցաւոր է՝ այլ **Հ**այկան-  
կուխտ սիրէ զնա :

Արքայ ՚ի բաց մերժէ զքոյր իւր . կո-  
րիր ասէ անարժան աղջիկ , ցնորիս :  
Արեղին կցեալ ձեռօք կայր առաջի և  
ուշ գնէր կատարածին : Արասառոք  
աստ ծովացան յաչս նորա , **Հ**այկան-  
կուխտ կալաւ զաջոյ Արքայի և երկիցս  
համբու բելով զայս ասաց , եթէ չողոր-

միտ դմա , և ինձ ինքեան միւ ողորմեր .  
որ ինչ վճիռ հասանիցի Աբեղինի ,  
այն և ինձ հատցի , ոչ վասն նորաւա-  
ղաչեմ , այլ վասն քո Աբքոյ , Եր-  
բայր Հայր , դրժեա խոստման քում ;  
այլ ինայեա ի կեանս նորա :

Երուանդ բարկութեամբ մեծաւ թըն-  
դաց անգանօր , Աբեղէն մեւցի : —  
Եւ դու տանիլ կարիցես ասէ Աբեղէն  
զազաւնիս ամբիծ ընդ ոտիւքի հոգե-  
վժրել . զնա բոնաւոր , որ ոչ սիրեցեր  
զքոյր՝ որպէս արժանն էր , այսուհետեւ  
ոչ է նա քոյ՝ այլ իմ Աբեղինի է Տի-  
կին : Յարոյց զնա , համբուրեաց , և  
ասաց , Հայկանդուխտ՝ իմես դու . մահ  
միայն կարէ բաժանել զմեզ , դու սիրես  
զիս , որպէս արժան համարէի ես սիրիլ .  
եահա երջանիկ եմ ես . պատահեսցին  
որ զի՞ն և պատահեսցինն , Օ այս ա-  
սացեալ յանձնարար զնա անուշակ զըր-  
կանացն Շողենայ , յառաջ խմողաց 'ի  
միջոցս սրահին , և այսպէս խօսեցաւ առ  
բազմական :

Աբդ Աբմաւրացիք , արդարեւ մատ-  
նել կամիջիք զիս որոյ արդարութեան

առանց յօւսոյ, և ողորմութեան, Բարիոք է ։ արարէք որպէս և կամիք ։ բայց յառաջ քան զյատեան բազմունքն ինքնին դատեցայց զումանս ի ձէնջ։ Եւ ուսրուք ինձ սպանողիս Ապղենակայ Ասենակայ, Խորխոռունայն և Շեկանայ ։ Ես նոյն եմ, ոչ ուրանամ։ Բայց ոչ ախորժիցիք գէթ հարցանել ցիս, թէ ոյք այն Ճոխքաղաքացիք՝ որք վարձեցին զիս առ ի մահ նոցա։

Օ այս ասացեալ եդ զմատունս ի բերան, և սուլեաց. և ահա դղրուցան դրունք արքունեաց, մտին գունդք պահաց, և մինչ այս մինչ այն դահերիցունք ապստամբացն զինաթափիք զգուշացան։ “Պահեցէք զգուսա, զնդապէտք այդ իմ իսկ է Հրաման, զուաց Արեղէն անհնարին ցասմամբ սրամատութեան իւրոյ։ Ազնիւ Արմաւրացիք։ Հայեցաբուք ընդ անզգամնդ, գոքա են, որ կորուսին զերիցունս ամենալաւ իշխանաց ձերաց, բողոք բառնամ զզոցանեւ։ մի, երկու, երեք, չորս, հինգ, և Հոգեռը Տէր մեր՝ վեցերորդն ի նոցանեւ։

Անշարժ քարացան ապստամբքն . խիղճ  
 նոցա հարկաներ զեռսա և ոչ ոք իշխէր  
 զգեմ ունիլ Արեղինի . Խորհրդականք  
 Արքայի խռովեալք ընդ իրեարս խառ-  
 նեցան , և ասեն զին՝ այսոքիկ ակնար-  
 կիցեն : Քրմապեան ՚ի վերջոյ ոգի ըս-  
 տացաւ և ասաց , ամօթալից խորաման-  
 կութիւն արդարեւ անօրէնն անզերծ զո-  
 լով ՚ի պատժոց՝ առ նախանձու կամի և  
 զմեզ տոգորել ՚ի կորուստն անհնարին :

Գունք . **Չ**արութեամբ վարուց իւրոյ՝ չա-  
 րագոյն անզզամաց հանդիացաւ , բայց  
 արդ և չարութեամբ մահուն իւրոյ՝ ըդ-  
 դիւօքն զանցանե Արեղին վեհանձնու-  
 թեամբ . լռեաց , գիտեմ ես զամենայն ո-  
 րագայթս քոյ , տեսեալ եմ զամենայն նա-  
 խազզուշութիւնս քոյ , ծանօթ եմ ծա-  
 ծուկ հնարից քոյոց . և զարդիս այնինչ  
 խօսիմս ընդ քեզ՝ պաշտօնեայք արդա-  
 րութեան և գուեզն ոստան գուե գործեն  
 խմով հրամանաւ՝ ունիլ զամենայն գե-  
 ղին երիզաւոր դաւակիցս ձեր , որք կա-  
 մեին յայսմ խոկ զիշերի յաւեր ապա-  
 կանութեան գնել զԱրմաւիր , լռեաց  
 ուրեմն , և մի ցնորեր : Արքայ զարմա-

ցեալ. զին՝ չ այսոքիկ նշտնակիցե՞ն՝ ա-  
սէ ցԱբեղէն. Աչ առաւել ինչ կամ  
պակաս՝ Արքոյ. Քան զայս՝ զի Աբե-  
ղէն գտեալ զինդրոզ կենաց քոց, ահա  
մահու դատապարտէ, և դու խնդրես  
կորուսանել զնա ՚ի տարապարտուց :

Յայնժամ խօսեցաւ Արտաւան Խոր-  
հրդական՝ և ասէ, Ո՞եծութիւնք Հա-  
յոց, և զին՝ որ լսեմն զձէնջ. լուռ կայք:  
Աբեւէն. Ա ասն զի՝ խմաստունք են, և  
զիտեն, զի ունայն խօսք ոչ փրկեն. զզօրս  
նոցա զինաթափ արարեալ ՚ի բանդ վի-  
րապին առաքեցի, այց ելցեն թող նոցա  
անդր, և ուսցին. Արդ խմացայք զի պահ  
դնել գրաց արքունի ոչ էր վասն Աբե-  
ղինի, այլ վասն քաջացս այսոցունց :  
Եւ արդ ժողովնւրդք Արմաւրայ, բադ-  
դասեցէք զզործս ձեր ընդ զործոց խմաց:  
Վտանգաւ կենաց խմաց փրկեցի զտէրու-  
թիւն ձեր ՚ի ձեռաց կւաքսայ Արքա-  
յի Ո՞արաց, ծպտեալ որպէս սրիկայ՝  
մտի յամուրս ապառամբէից, զսրիկայս  
մատնեցի ատենի արդարութեան՝ կտ-  
խեալ զիայտէ: Ա ասն տէրութեան  
Հայոց խորշակի, և ցրտոյ, և տօթոյ, և

անձրեոյ համբերեցի, թաղ զֆարաւ և  
զքաղց, վասն ապահովութեան կանանց  
և տանց ձերոց՝ զցայգ և զցերել տքնե-  
ցայ, Արմաւիր զիւր բարեշնորհութիւնն  
գուք զկեանս ձեր զամնայն՝ պարտական  
էք ինձ : Խակ արդ այս ամենայն վաս-  
տակ ինը չունիցին ինչ առ ՚ի վարձ :

Օ այս ամենայն վասն Հայկանդիսաց  
արարեալ, արդ վրէպ ՚ի նմանէ նատայց :

Փրկեցի ՚ի մահուանէ զկեանս ձեր ՚ի  
խառնակութենէ՝ զկանայս և զզստերս  
ձեր . և ՚ի խանգարմանէ զաշխարհ ձեր  
միանգամայն, արդ արք, արք զիս ՚ի  
խեզք և ՚ի կազախան վճռիցէք :

Հայեցարուք յայս ցուցակ, տեսէք  
քանի ոմանք ՚ի ձէնջ արբուցանէին զսուր  
ծարաւի թշնամեաց իւրեանց, եթէ ոչ  
յառնէր Արեղէն ՚ի փրկութեան ձեր .  
և տեսէք թէ ուր իցեն արդ նաքա, Բն-  
թերցէք ՚ի դէմս զոցա, և զտջիք զդա-  
տակնիք գոցա կնքեալ աջուն Արմազ-  
դայ և խղճիւք մտացն իւրեանց : Ենաց  
զոնեայ ամլա մի՛ առանց անպարտ արիւն-  
հեղութե, խօսիցի ոք ընդդէմ շնմարտու-  
թե այսորիկ բայց չէ, զեռ բան շատ կայ :

Դարձաւ առ Ապատամբսն , լուա-  
րուք ինձ դաւաճանք . որ նախ իտուտո-  
վանիցի զՃշմարտութիւն , թողութիւն  
ձրի շեորհեմնամ , այս ուխտէ իսմ Ա-  
բեղինի որիկայի : Առքա ամենենին լուռ  
կացին , այլ Շաւենեակ Բողեաշխ Աղձ-  
նեաց յարուցեալ զոտս Արքայի համ-  
բուրեաց՝ և ասաց . Խշանք Հայոց ,  
ուղիղ են բանք Աբեղինի : Այլ միւ-  
սոցն յամառեալ ՚ի խորհուրդն չարու-  
թեան միաբերան գոչեցին՝ սուտէ :

Լուռ լերուք , ամսզօրէն զոռաց սրտ-  
մտեալն Աբեղէն , լուռ լերուք ասեմ ,  
և ինձ լուալուք . կամ զոնեայ վտա-  
րանդեալ հոգւոցն այնոցիկ՝ զորս զո-  
հեցիք կատազի սրտմտութեան ձերոյ՝  
և յետին յիմարութեան , թնդաց այլն  
զարհուրելի : Երեեցարուք , երեեցա-  
րուք , հաս ժամ : Ոտ լեաց միւսանզամ :  
և ահա առաջի կացին կենդանի բարե-  
կամք Արքայի , Ա աղենակ Տէր Աիւ-  
նեաց , խորէն խորխորունի . և Շ-  
կան մարդպետան մարդպետ :

Այժմիկ զիտացի , զի մատնեցաք , ա-  
սաց Գորիս Ապամեայ , և հանեալ լզ-

թաքուցեալ դաշոյն իրր միսեաց ՚ի սինո  
 և չոքաւ զիւրովին : Բարէ թէ ուրքան  
 սքանչելի տեսարան ուրախութեան ծաղ-  
 կեալ ծաւալեցաւ անդանօր : Վար-  
 գարտակաթ արտասուք խնդրութեան  
 ընդ ձիւնափայլ ծնօտս Արքայի կայ-  
 րակնօրէն պաղպաջեցան , արտասուք և  
 ընդ աչս ծովացան երեցուն Աւագ նա-  
 խարարաց Հայոց աշխարհի , այնինչ  
 միւսանգամ կենդանի թեօք փարեցան  
 զգնկօք Արքայի , բարեկամի և եղբօք  
 սիրելոյ իւրեանց : Արոց ոչ ակնունէր  
 Արքայ տեսանել յաշխարհի այսմիկ .  
 մինչև ՚ի դատաստան աստուածոցն : Չո-  
 րեքին սոքա՝ արք անպարտելիք , մազ-  
 գեզունք արիք , և բարեկամք պանձա-  
 լիք , ՚ի մանուկ տիոց անտի սերտ շաղ-  
 կապեալ ընդ իրերաց , կեցին ՚ի միասին  
 Ճերացան ՚ի միասին , և յարգեցան ՚ի մի-  
 մանց : Ամենայն բազմութիւն հիանայր  
 ընդ տեսարան հանդիսի ցնծութեան  
 նոցա : Օք երունի խորհրդականք սըր-  
 տիցն : Երազ երջանիկ , յորում ոչինչ  
 տեսանէր , քան Արքայ և սիրելիք իւր:  
 Վչ ոք անգամ խմացաւ թէ Երբ և որ-

աղես փոխադրեցան յապարանից անտի  
կահերիցնեքն ապատամբոց , և անձ-  
նապանն Պորխ Կաղմեայ : Ու ոք  
խմացաւ բաց ՚ի Շողենայ , զի Հայկան-  
դուխտ վարելով զպարանոցաւ վթրտո-  
գիսակ սիրոյնոյն , Հազարիցս Հազար  
անգամ կըկներ , ուրեմն Արեղէն չեք  
սպանող , ուրեմն Արեղէն անմեղէ :

Ենազան ուրեմն ՚ի վերայ ժողովե-  
ցան : բան վերստին վերաբարձաւ առ  
նոսա , և առօջին բարբառնոցա եղե նո-  
ցա՝ ողջ Եր փրկիչ Արմաւրայ : Առաս-  
տաղք Ապարանից բիւր անգամ բարձ-  
րոցուցին յարձագանզս իւրեանց զա-  
նունդ Արեղէն , և յամենայն բերանոց  
օրհնութիւնք անձրենեցան ՚ի գլուխ :

Ե՞ոյն խել Արեղէն , որ միով ժա-  
մու յառաջ ՚ի կախազան վճնեցաւ յա-  
մենայն անձնէ , այժմ լուրջ և անվր-  
դով արձանանայր կոյր , իբրև բազին  
՚ի պաշտօն : Այժմ սկսու խանութազա-  
տիլ ՚ի վերայ որոց փրկեացն , և այժմ  
կաթողնեցաւ քաղցրութեամբ աչաց առ  
սիրուհին ակնարկել , որոյ սէր վարձ  
գնէր քաջի վաստակոց իւրոց :

Արեղէն, կարդաց Արքայի առ սրի-  
կայն յառաջելով դժու առ նօն . և զաջն  
հարկառելով : Չեմ Արեղէն պատաս-  
խանեաց . Քաջն, համբուրելով ակնա-  
ծութեամբ զաջ Արքայի Հայոց Վե-  
ժաց, և ոչ իսկ Օ ուրան եկն Աղուա-  
նից, այլ Հայ՝ որդի Հայկայ մազդե-  
զանց, շառաւիզ քաջաց, և արիւն Ար-  
քայի տեսան իմոյ . Ա արդգէս անուն  
իմ, Տէր Տուհաց : Վահ ոխերմի ի-  
մում Ասենակայ էզերծ յինէն զծպիտ և  
զդիմակ զաքնութե, այտւհետե պարզ ՚  
պարզոյ խոստովանիմ թէ ով իսկ իցեմ :

Տաղնապաւ իմն ընդհատեաց Արքայ  
ով, — Ասենեակ : — Վի երկնչիր ասաց  
Վանումն Ա արդգէս, Ասենակ անկա-  
իրաւ, ոչ զաւաճանութեամբ կամ կնա-  
մարդութեամբ, այլ քաջաբար ՚ի փա-  
ռացի մենամարտութե իմում պարզելով  
զոգին : Արիւն՝ որ ներկեաց զուր նորա  
վիժեցաւ յիմոցն երանաց, և ՚ի վերջին  
շունչ կենաց խայթահարեալ ՚ի խղձէ  
մասցն իւրոց՝ ոչ մեռաւ, մինչ ոչ զը-  
րեաց ՚ի յուստութի քազզանին վաւերա-  
կան վկայութիւնս զիմոյ անմելութե-

նէ առ այն ամենայն շարիս՝ զորո բամ  
 բարուրեաց իվերայ իմ, ապախտ առնել  
 զիմ անուն, և անարժան հայրենի ժա-  
 ռանգութեան: Այս, ուսոյց նա ինձ  
 և հնարս + թէ իւ մարթացայց յիշ գը-  
 րաւել զջուհիս, և վերստին նորոգել  
 զիսաթարեալ և զիսրամատեալ՝ փառս-  
 հայրենեաց իմոց: Ամենայն գաւառն-  
 ջուհաց զիս իւր ինքեան տէր ճանաչէ  
 զարդիս, տեղեկացեալ ամենայն որո-  
 գայթից և հնարիցն Ասենական, որով  
 մարթացաւ յաքսորանս առաքել և  
 պարտաւորել ցայս վայր՚ի թաքստիպա-  
 հել զիրական անուն և զարիւն և ծըպ-  
 տեալ յօր տարագ և հարկն պահանջեր  
 վտարանդի գնալ յաշխարհ յամենայն,  
 մինչև դէպք յաջողեցին ինձ զալ յԱր-  
 մաւիր հասանիլ: Ուրանօր այնքան  
 փոփոխեալ էին կերպարանք, մինչ  
 կասկած ճանաչելոյ զիս բառնալ յա-  
 մենայն աչաց, և թէպէտ անվեհեր՚ի  
 թշնամեաց աստանդէի աստանօր, այլ  
 երկնչէի սովամահ սատակել՝ ի փողոց  
 ձեր: Քայս տագնապ տարակուսի և կա-  
 րեաց՝ դիսլաւ իմն ծանօթացայ սրիկայ-

Եց յորոց հեծէր Արմաւիր սկամսվին  
 միաբանեցայ ընդ նոսա մասմամբ իւիք  
 մաքրել զքաղաքն կամցեալ յերեսոց  
 նոցա և մասմամբ իւիքի տեղեկանալ և ս  
 մեծամօծ անառակաց քաղաքիս մտա-  
 բերեալ որք վարձէին զնոսա ՚ի կո-  
 րուստ ամենայն պատուականագունիցն  
 ՚ի քաղաքացեաց Յերկոսին միանզա-  
 նայն յաջողեցայ զԱպյկուն սալսրու-  
 կայից դի տապաստ որկի ընդ ոտիւքն  
 Հայկանդիսոյ և զմնացորդան մասնե-  
 ցի ատենի արդարութեան կախել ըզ-  
 փայտէ Ես կացեալ փոխանակ ա-  
 մենեցուն մի միայն սրիկայ զամենայն  
 արս նենդաւորս զհայրենատեացսն և  
 զարենարբուա յանուանէ յականէ ծա-  
 նեայ խուզեցի զամենայն խորշ թաք-  
 նութեան ՚նոցա զտի զկաղաղ ապըս-  
 տամբացն աղերսացայ ՚ի ՚նոցանէ ջնջել  
 զերեսին ՚ի հոյակապ ՚նախարարաց Ար-  
 քայի ուստի և հաւստա մասուցանե-  
 լով ՚նոցա զինէն անկասկածութեան չո-  
 քայ առ Տէրն Ախնեաց յիմ մի միայն  
 բարերար և ծանուցի ՚նմա Որ ետինձ  
 զամենայն արտունութիւն ՚ի զործն առա-

ջիկայ, հաւատաց ձեռին իմում զամենայն բանալիս պարտիզացն, արքունի դարպասաց քաղաքիս, և գաղտուղի գընացից զաղստիցն Արմաւրայ. որով հնարէի, յորժամ և կամէի եւանել յերես Արքայի, և զարթուցանել զնայելոյ անձին զգուշութիւն, ոչովաւ. ծանուցայ ամենայն մեծամեծաց քաղաքիս իբրև իշխան Աղուանից, նովաւ զրեցայ ՚ի շնորհս Արքայի, որ ոչ միայն ինքնակամ յօժարեցաւ ՚ի թաքստի կալվառուրս ինչ վասն սերոյ Հոյրենեաց՝ այլ և օրինակ բարի հանդիսացաւ Իշխանին խորխոռունեաց, և Վարդպետան Վարդպետի կատարածի զործոյն ակն կառուցեալ: Արդ սրիկայք՝ չեն ուրեք, ապստամբքն բանդարկեցան, իմ ձեռին զործք յաջողեցան, և եթէ տակաւին արժանի համարիջիք, առաջի կայ ձեր Տէր Տուհաց իբրև զսրիկայն Արեգէն, կախեցէք զնա:

Կախել զքեզ, միաբերան աղաղակեցին Արքայ և Աւագանին, քաւ լիցի: Յաղթութիւն, աղաղակեց Հայկակուխտ ալարզեղով առ Տուհաց Տէր

զաջն ծիւնափայլ . զոր նա կալեալ համ-  
բուրեաց : 'Ի ինդէն ելաց Աքըքայ , և  
այն ինչ սրբէր զարտասուա յաչաց իւ-  
րոց՝ աղաղակեաց և ասաց , արդարեն իւր-  
կու Աբեծ Ամարդ յԱլոմաւիր :



### Գ Լ Ո Ւ Խ . Է .

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ե Խ Ն :

• Յարուցեալ ՚ի վաղիւ քաջ ընդ ա-  
ռաւօտն քազմեցաւ Վարդգէս ընդ մէջ  
Հայկանդիսոյ և Արքայի , և պատմեաց  
նոցա զառիթ ատելութեան Ասենակայ  
առ ինքն : զկորուստ Օ արինայ՝ զա-  
ռաջնոյ սիրահարին , զբարութանս՝ որով  
աղարտեցաւ անուն իւր , զազատումն ՚ի  
սրիկայիցն առաքելոց յԱսենակայ առ  
՚ի մահ անձին իւրոյ , խուսափմունսն  
տեղեաց 'ի տեղիս , զուտումն արուես-  
տին մոգութեան ՚ի մէջ վհկացն Աղկէ-  
ացւոց , որով այլափոխէր զկերպարան  
իւր , յոր տարազ և հարկ և կամք յօ-  
ժարէին , զվերստին դարձ իւր յաշ-  
խարհն Տուհաց՝ ծպտեալ ՚ի սոսկական  
տարազ լեռնորդի ուղուք , և ՚ի Պար-  
վանայ մոգէ լսել թէ ամենայն ժողո-

վուրդ երկրին զինքն ծովակուր եղեալ  
 ՚ Վ րկանք համբաւէր : Աւստի և թրշ-  
 նամեաց դադարումն ՚ի խնդրելոյ զկեանս  
 իւր : Յաւելոյր յԱրմաւրին փոփոխել  
 վիճակի իւրում իբրև Օ ուրան իշխան  
 Աղուանից , և ՚ի գալոյն Եսենակայ եր-  
 կուցեալ փախչել և թաքչել զՔասաղ  
 գետով , մինչև գեպք յաջողեցին ասէ՝  
 ՚ի գիպահոջ պատահեցուցանել զնա , մե-  
 նացեալ յիւրոյն քաջաց , և պահանջել  
 ՚ի նմանէ զիրաւունս , թէ որպէս մենա-  
 մարտեալ կռուեցան , և ՚ի բազում տե-  
 ղիս վիրաւորեցաւն , բայց ՚ի վերջոյ  
 յաղթեցի ասէ , և զմահ քաջին նշա-  
 ւակ եղի առ ՚ի զարհոյր Երբայի : Օ ա-  
 պստամբութիւն Ետրակայ Իպարապե-  
 տի Հայոց առ ՚ի կորզումն Հայկանդիս-  
 տոյ , միաբանութիւն չարացն , և յենուլ  
 նոցա յԱրբայն Մարաց ՚ի կւաքս :  
 ՚ Ա խանձ նորա առ Օ ուրան Աղուան ,  
 վասն ՚ի շնորհա Հայկանդիստոյ մտանե-  
 լոյն , խորհուրդ սպանութեան զնամա-  
 նէ ՚ի ձեռն Երեղինի , վերջին յանձնա-  
 ռութեան իւր , և կատարածն անձկալի :  
 Եպա մեծահանդէս հարսանիք կա-

տարեցան Դաժիսոյի Հայոց ընդ Ա արդ-  
դիսի Հայկազունոյ զեօթն, ու և զի-  
շեր : Արմաւիր ջահազարդ պայժառա-  
ցաւ զիշերավառ աստեղօք : Արքայ  
Երուանդ զուարձացաւ ընդ զիստ քաջի  
Պատանոյն : յաւել 'ի աէրութիւն  
Տուհաց գաւառի . և զմիծ բդեշխութիւնն  
Տայոց և Գուղարաց ցՊոնդոս : Են  
նմա զպահն երկրորդական և ծամակալ  
մարզարտեայ , զիսդ յերկոսին ականջս ,  
կ-իմիր զանկապան միոյ սրունին , և կո-  
շիկս ականակուռս : Յաւել 'նմա և կալ-  
ուած 'ի գաւառին արքունեացն յԱյ-  
րարատ , զընդարձակ դաշն զԸ ըէ-  
բլուզ , զԲասաղ զետով , զտեղի թա-  
քստի նորա յերեսաց Ասենական . ուր  
կառուցեալ աւան հզօր Ա արշէս ա-  
նուն , անդ անցոյց զաւուրս երջանկու-  
թեան իւրոյ հանապազորդեալ 'ի իւրախ-  
ճան Արքայի :

Կատարեցան Գիրք Երորդ Վարդ զիսի :

24

